

ԱՊԱԳԱՅ

ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 1997 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 17 ՕԳՈՍՏՈՍ 2015
• VOL. XXXVI, NO 1997 • LUNDI, 17 AOÛT 2015 • MONDAY, AUGUST 17, 2015

1915-2015
ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ՐԳ ՏԱՐԵԳԱՐՁ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ

ՄՐՏԱԳԻՆ ԿՈՉ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՄ

Յարգելի ընթերցող.

2015-ը բացառաբար նշանակալից հանգրուան մըն է Գանատայի առաջին եռալեզու հայկական շաբաթաթերթ՝ «Ապագայ»ի համար: Այս տարի «Ապագայ»ի տարեդարձը արտակարգ իմաստ ունի որովհետև ան կը թեւակոխէ իր գոյութեան 40-ամեակը, բայց նաեւ, ու մանաւանդ՝ որովհետև այս օրերուն ան կը սկսի հրատարակուիլ, միշտ երեք լեզուներով, այս անգամ համակարգչային առցանց (online) արդիական եւ ամբողջովին նոր դրութեամբ մը, մինչ պիտի պահուի տակաւին թուղթի վրայ տպագրուած դասական տարբերակը: Մեր ABAKAONLINE.ORG-ը մեր գիտակցութեամբ, կը հանդիսանայ միակ online եռալեզու հայկական թերթը:

Online դրութեամբ լրատուութիւնը պիտի կատարուի կարելի չափով օրական եւ ժամ առ ժամ անմիջական յաճախականութեամբ, պահելու համար լուրերու թարմութիւնն ու այժմեականութիւնը: Բժախնդիր եւ երկար հաւաքական աշխատանքներու շնորհիւ, մասնագիտական բոլոր պատրաստութիւնները ամբողջացած են եւ մօտ օրէն կը կատարենք abakanews.org կայքէջի բացումը:

«Ապագայ»ի 40-րդ տարեդարձի եւ online-ի պաշտօնական բացման հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Յոկտեմբեր 9, 10 եւ 11 շաբաթավերջին, երբ պիտի գումարուի նաեւ Թեքէան Մշակութային Միութեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի 34-րդ Պատգամաւորական Ժողովը: Հանդիսաւոր ճաշկերոյթն ու տօնակատարութիւնը պիտի կայանայ Միութեանս կեդրոնատեղիին մէջ, Շաբաթ 10 Յոկտեմբերին, երեկոյեան ժամը 8-ին: Երեկոն պիտի ոգևորէ համբաւաւոր երիտասարդ աճապարար Պետո (Spidey) Աթթէլեանը:

Այս պատմական տօնախմբութեան առիթով, եւ «Ապագայ»ի նոր նախաձեռնութեան նիւթական յաւելեալ ծանր բեռը տանելի դարձնելու նպատակաւ ու արդէն իսկ կատարուած եւ տակաւին կատարուելիք նիւթական անհրաժեշտ ու կարելոր ներդրումները ապահովելու համար, անգամ մը եւս կը դիմենք մեր ընթերցողներու բարեացակամութեան եւ մանաւանդ հայ մամուլի կենսական կարեւորութեան հաւատացողներուն, որ իբրեւ 40-ամեակի բարերարներ, իրենց սրտաբուխ նուիրաբերումով սատարեն «Ապագայ»ի շարունակականութեան: Բոլոր նուիրատուութիւններու փոխարէն պիտի տրամադրուի 40-ամեակի հանդիսութեան հրաւեր եւ տուրքէ նուագելի ստացագիր:

Հաճեցէք ընդունիլ մեր կանխայայտ շնորհակալութիւնները:

Յարգանքով՝
ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆ
Ատենապետ «Ապագայ»ի վարչութեան

Հայաստանի սահմանին լարուած վիճակը կը շարունակուի

Վերջերս Ղարաբաղ-Ատրաբայեանական հակամարտ զօրքերու սահմանագծի ողջ երկարութեամբ հակառակորդը շարունակած է տարբեր տրամաչափի հրաձգային եւ հրետանային զինատեսակներէն կրակելով՝ խախտել հրադադարի պահպանումը:

Օգոստոս 8-ին եւ 9-ին, բացի խոշոր տրամաչափի հրաձգային զենքերէն, ատրաբայեանական զինուորական ուժերը հայ դիրքապահներու ուղղութեամբ 60 եւ 82 մմ-անոց ականանետներէն արձակած են 165 արկ:

Ընդհանուր առմամբ նշուած ժամանակահատուածին հակառակորդը հրադադարի պահպանումը խախտած է աւելի քան 400 անգամ, որուն ընթացքին արձակած է շուրջ 7500 կրակոց:

ՊԲ առաջապահ ստորաբաժանումները վստահօրէն իրականացուցած են իրենց առջեւ դրուած մարտական խնդիրը եւ պատասխան գործողութիւններով ճնշած հակառակորդի յարձակումները:

«Ոչնչացուած է 17 պինձառայող եւ 3 ռազմակայան»

Հայաստանէն Արշակ Չաքարեան Facebook-ի միջոցաւ կը տեղեկացնէ թէ վերջին երկու օրերու ընթացքին Հայկական ստորաբաժանումները պատասխանելով ատրաբայեանական կողմէ հրադադարի խախտումներու փորձերուն, Արցախի Հիւսիս-Արեւելեան սահմանին վրայ պատժիչ եւ կանխարգելիչ գործողութիւններով ոչնչացուցած են հակառակորդի երեք ռազմակայաններ, մեծ քանակութեամբ ռազմական մեքենաներ, խոշոր հրաձգային զենքեր եւ 17 զինուորներ:



Ժերար Դեպարդիէն՝ Հայոց Ցեղասպանութեան մասին նոր ֆիլմի Դերակատար

Հայ բեմադրիչ Արտակ Իգիթեան կը նախատեսէ Հայոց Ցեղասպանութեան մասին «Անատոլիական պատմութիւն» (Anatolian Story) վերնագիրով ֆիլմ նկարահանել, ուր կը խաղան ֆրանսական շարժանկարի յայտնի դեմքեր Ժերար Դեպարդիէն եւ Սամի Նասերին:



Լեկրանը:

Ըստ կայքի՝ ֆրանսահայ յայտնի երգահանը պահանջած է, որ ֆիլմի գլխագիրներու մէջ Լեզրան ազգանունը կրնայ լինել հայկական Տեր-միքայելեանը:

Ֆիլմի մէջ գլխաւոր հերոսի՝ Մուսթաֆայի կերպարը կը մարմնաւորուի Ժերար Դեպարդիէնի կողմէ, որ հայ հանդիսատեսին առաւելապէս յայտնի է «Տաքսի» ֆիլմերէն: Դեպարդիէն ֆիլմի մէջ կը մարմնաւորէ փաստաբանը:

Ինչպէս կը հաղորդէ «Արմենփրես»-ը՝ վկայակոչելով rusarminfo.rn (ռուս-հայկական տեղեկատուական գործակալութիւն), ֆիլմի գլխաւոր հերոսը Մուսթաֆա Ղազին է, որ իր ողջ կեանքը նուիրած է Թուրքիային ծառայելուն: Ծեր հասակին Մուսթաֆա, որ իր ողջ կեանքի ընթացքին ատած է Հայաստանն ու հայերը, կը պարզէ, որ հայ է: Ֆիլմի սենարի հեղինակը Մարգ Արէնն է (Կարէն Մարգարեան):

Դարմոն, անոր որդին կը մարմնաւորէ Սամի Նասերին, որ հայ հանդիսատեսին առաւելապէս յայտնի է «Տաքսի» ֆիլմերէն: Դեպարդիէն ֆիլմի մէջ կը մարմնաւորէ փաստաբանը:

Կը նախատեսուի, որ ֆիլմի նկարահանման աշխատանքները կը սկսին 2015 թուականի Նոյեմբերին: Նկարահանումները կ'իրականան Հայաստանի, Թուրքիոյ, Ֆրանսայի եւ Գերմանիոյ մէջ:

Ֆիլմի երաժշտութիւնը պիտի գրէ միշէլ

«ԱՊԱԳԱՅ»-ի քառասունամեակի առիթով.

Շուտով պիտի սկսի գործել. նաեւ,

ABAKA News, online

Համացանցային եռալեզու ամենօրեայ լրատուական ճոխ հրատարակութիւնը

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԺԱՄԱՆԱՎՆ Է ՈՐ ԻՐԱՆ ԲԱՑՈՒԻ ԱՇԽԱՐՀԻՆ ԿՆՔՈՒԱԾ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԹԵՒՒ ՈՉ ՄԵԿ ԿՈՂՄԻՆ ԼԻՈՒԼԻ ԳՈՐԱՑՈՒՄ ԿՈՒ ՏԱՅ, ԲԱՅՑ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՆԿԱՏՈՒԻ ԳՈՐԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԻԱՂԱՑՔԸ

ԳՈԿՏ. ՆՈՒՊԱՐ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ջերմակորիզային համաձայնությունը, որ կնքուեցաւ Աւստրիոյ մայրաքաղաք Վիեննայի մէջ, Իրանի եւ վեց գեր-պետութեանց միջեւ, անկասկած պատմական անկիւնադարձային, ուշագրաւ դէպք մըն է: Այդ վեց պետութիւններն են Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Ապահովութեան Խորհուրդի հինգ մնայուն անդամները – Միացեալ Նահանգները, Ռուսիան, Ֆրանսան, Մեծն Բրիտանիան ու Չինաստանը – ինչպէս նաեւ Գերմանիան: Այս առիթով մասնակից եղաւ Եւրոպական Միութիւնը եւս: Այս համաձայնութեամբ վերջ գտած կը նկատուի 36 տարուան թշնամութիւնը, որ գոյութիւն եկած էր Ուաշինկթընի եւ Թեհրանի միջեւ:

Այս նիւթին շուրջ կ'ուզենք արտայայտուիլ, որովհետեւ Իրանը Հայաստանի չորս դրացի պետութիւններէն մէկն է, որ քրիստոնէայ չըլլալով հանդերձ աւելի՛ բարիացակամ վերաբերում կը ցուցաբերէ մեր հայրենիքին ու կառավարութեան հանդէպ, քան թէ քրիստոնէայ Վրաստանը: Կասկած չկայ որ՝ մենք եւ – կառավարութիւն ու ժողովուրդ – կը փոխադարձենք եւ պէտք է փոխադարձենք միեւնոյն բարեկամական յարաբերութիւնները:

Առաջին հարցումը, որ այս պահուն մեր միտքը կու գայ հետեւեալն է. ի՞նչ կը մտածուի Իրանի մասին, այլ խօսքով՝ այժմ ընդհանուր տպաւորութիւններն ի՞նչ են իրանցի ժողովուրդին եւ անոր ղեկավարներուն հանդէպ: Ոմանք լաւ կ'արտայայտուին, ուրիշներ՝ ոչ-լաւ, ինչ որ հասկնալի է: Չարմանալին այն է որ՝ որոշ թիւ մը անձեր դժուարութեան կը մատնուին արտայայտուելու ժամանակ...:

Այսպէս իբրեւ օրինակ յիշենք անունը ազգային հերոս Չորավար Արքատի Տեր-Թադէոսեանի, որուն հետ հարցազրոյց մը ունեցած է սփիւռքահայութեան շքեղ ու տպաւորիչ ամսաթերթ «Nouvelles d'Arménie»-ն Մարտ 2015ի թիւով եւ որուն ընթացքին հետեւեալ հարցումը եղած է.

«Իսկ Իրանը, Հայաստանի բնական դաշնակից մը չէ՞»:

Ազգային Հերոս Չորավարը տուած է համառօտ այլ համապարփակ պատասխան մը. «Իրանը վաղնջական երկիր մըն է հիանալի մշակոյթով, բայց ան շատ բարդ է: Ոչ ոք կրնայ գիտնալ, թէ իրանցիները իրականութեան մէջ ի՞նչ կը մտածեն»:

Այս յատկանշական լուսաբանութեամբ, այսուհետեւ մեր յայտնելիք կարծիքները դիւրահասկնալի կը դառնան իսկոյն:

Արդարեւ, Վիեննայի համաձայնութիւնը մեզ կը դնէ տարօրինակ կացութեան մը առջեւ: Համաձայնութիւն գոյացած է, բայց ոչ ոք բոլորովին գոհ է, կը շեշտենք. երկու կողմերն ալ դժգոհութեան պատճառներով իրենք զիրենք անհանգիստ կը զգան...:

Ուշադրութեան առարկայ դարձնենք Ուաշինկթընը: Հասկնալիօրէն հանրապետական տասնեւեց թեկնածուները, մեծաւ մասամբ, դեմ են այդ համաձայնութեան. կը խորհին թէ բանագնաց ճան Քերրին թոյլ գտնուած է. անոնք կ'ակնկալեն որ առաւել սեղմումներու ենթարկուելու էր Իրանը, որպէսզի հրաժարէ հիւլեական ռումբ պատրաստելէ. կ'ակնարկեն նոյնիսկ պատերազմելու հաւանականութեան մը մասին...:

Բուն խնդիրը սակայն, հանրապետականներուն հանած աղմուկը չէ, այլ նոյնիսկ Նախագահ Օպաման եւ ճան Քերրին ամբողջական ինքնավստահութիւն չունին որ իրանցիք անկե՞ղծ են թէ ոչ կը կեղծեն անկեղծ ըլլալ: Այսուհանդերձ, անոնց դիրքորոշումը հանրապետականներէն Նախընտրելի է, քանի որ անոնք պատրաստակամութիւն կը յայտնեն իրենց դիրքը փոխելու անմիջապէս որ համոզում գոյացնեն որ՝ համաձայնութեան պայմանները չեն յարգուիր, ինչո՞ւ ի յառաջագունէ դատապարտել Թեհրանը, որ յօժարած է դրուած պայմաններուն, ինչո՞ւ նոր սեղմումներու ենթարկեն զայն, նոյնիսկ՝ պատերազմ հռչակել, երբ տակաւին կանխահաս է եւ այժմ աւելի վտանգաւոր է ամեն տեսակ ծայրայեղութեանց դիմելը:

Յետոյ նկատի ունենանք Իրանը, որուն գերագոյն ղեկավարը՝ Այաթոլլահ Ալի Խամենեյին, որ համաձայնութեան կնքումէն անմիջապէս ետք անսպասելի յայտարարութիւն մը ըրաւ, ըսելով թէ՛ իր երկիրը, այս կնքումէն ետք, չի փոխեր իր քաղաքականութիւնը Միացեալ Նահանգներու հանդէպ, ինչ որ կը նշանակէ որ ինքն ալ զգուշութեամբ կը նայի նոր իրականութեան:

Գալով ուրիշ պետութեանց դիրքաւորման, ստիկ կարելու չենք նկատել: Այսուհանդերձ, կ'արժէ յիշել միմիայն Իսրայէլը, պզտիկ պետութիւն մը, որուն վարչապետը՝ Պենիամին Նաթանիահուն անգամ մը եւս ծայրայեղական որոշումներ արձակելու անզուսպ կարիքը կը տեսնէ եւ կ'արտայայտուի, այն տպաւորութիւնը նկրտելով ձգել թէ՛ ի՞նչ է եւս, վեց հզօր պետութեանց կարգին դասուած պետութեան մը ղեկավարն է...:

Ուրիշ դժգոհութիւն մըն է այն իրողութիւնը որ՝ Թեհրան, նոյնիսկ տնտեսական ծանր ճնշումներու ենթարկուած օրերուն, կանոնաւորապէս նիւթապէս կ'օժանդակէր Հեզպոլլահին: Հետեւաբար, ոմանք կ'ենթադրեն որ՝ հիմա սեղմումներուն վերացումով, Իրան տնտեսականօրէն զօրանալով աւելի պիտի օժանդակէ ուր որ ուզէ:

ՃԱՐԸ կը հաւատայ որ՝ իրանցիք արդէն 2003-ին մէկ կողմ դրած են որեւէ հիւլեական գէնք պատրաստելու ամեն ծրագիր: Այսուհանդերձ, շատերու մտքին մէջ այն գաղափարը տեղ գտած է թէ՛ Թեհրան ուշ կամ կանուխ պիտի տիրանայ իր հիւլեական գէնքերուն, եթէ ուզէ: Մի՛ մոռնաք, որ Իսրայէլն արդէն տիրացած է հիւսիսային Քորեան սուտ խօսած է եւ տիրացած է, **Շար. էջ 11**


Դաւիթ Բաբայեան. «Լեռնային Ղարաբաղի միջազգային ընդելուզման գործընթացը անխուսափելի է»

Իրադարձութիւններուն Ատրպէյճանի ջղաքրգիւն եւ հիւանդագին արձագանքը խղճահարութիւն կ'առաջացնէ:

ԼՂՀ Նախագահի մամուլի քարտուղար Դաւիթ Բաբայեանը, ըստ News.am-ի, մեկնաբանելով Արցախի հանրապետութեան կեանքի մասին գերմանական «Deutsche Welle» հեռուստառատիւրընկերութեան լուրին շուրջ Ատրպէյճանի ԱԳՆ-ի վրդովմունքը, նշած է, «Հերթական անգամ սա ոչ թէ արձագանգ է իրադարձութիւններին, այլ իրականութեան հիւանդագին ընկալում: Լեռնային Ղարաբաղի միջազգային ինտելեգրման գործընթացն անխուսափելի է, եւ այն շարունակուում է»:

Խօսնակը նաեւ նշած է, որ

«Deutsche Welle»-ի նկարահանող խումբը Արցախ եկած է սեփական ցանկութեամբ: «Ժամանցին, քանի որ նրանց հետաքրքիր է ներկայացնել Լեռնային Ղարաբաղում կեանքի մասին իրականութիւնը: Եւ որքան էլ Ատրպէյճանը սպառնայ, ինչպիսի նոթաներ կամ հաղորդագրութիւններ էլ ուղարկի, չի յաջողուի խեղաթիւրել իրականութիւնը: Բոլորին է պարզ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը կայացած պետութիւն է, որը դեռեւս ճանաչուածի կարգավիճակ չի ստացել՝ աշխարհաքաղաքական խնդիրներին չ'ընդունելով: Ատրպէյճանի նեարդային արձագանգը մեզ չի յուզում: Կարելու է այն, որ ճշմարտութիւնը հասնում է միջազգային հանրութեանը», - ամփոփած է Դաւիթ Բա-



բայեան: Նշենք, որ Ատրպէյճանի արտաքին գործոց Նախարարութիւնը այնքան վիրաւորուած է «Deutsche Welle»-ի նիւթէն, որ որոշած է բողոքի գիր ուղարկել:

Սուրիոյ Հոմսի մէջ ՏԱՀԵՇ շուրջ 100 Ասորի ընտանիքներ գերեզմարած է

Մարդկային իրաւանց ասորական դիտարանը յայտարարեց, որ ՏԱՀԵՇ Հոմսի նահանգին մէջ, սուրիական անապատին սահմանակից քարիաթէյն գիւղին մէջ շուրջ 100 ասորի ընտանիքներ գերեզմարած է:

Դիտարանը հաղորդագրութիւն մը հրապարակելով նշեց, որ ՏԱՀԵՇ չորեքշաբթի օր կառավարական ուժերուն եւ անոնց կողմակից միլիտներու հետ բուռն բախումներէ ետք գրաւած է գիւղը:

Դիտարանը կ'աւելցնէ, որ Սատատ գիւղին մօտ գտնուող Հիււարէյն գիւղի՝ ՏԱՀԵՇ-ի կողմէ գրաւումէն ետք, Հոմսի հարաւարեւելեան շրջանին մէջ գտնուող ասորական գիւղերու բնակիչներու լայնածաւալ արտահոսք գոյութիւն ունի:

ԱՊԱԳԱՅ
Շարքարէրք

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

**Պատասխանատու խմբագիր՝
ԱԼԵՏԻՍ ՊԱԳԱՆԵԱՆ**

**Ծանուցումներու,
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ**

**Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՏԱԹ Բ. ՄԱՄՈՒՐԵԱՆ**

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$90
U.S.A. 1st class (US)\$90
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec
PM40015549R10945
TPS/GST – R119209294 • TVQ/PST #1006268699

“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԳԱՆԱՏԱՅԻ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ՎԻԳԷՆ ԱԴԴԱՐԵԱՆԻ ՀԵՏ



Տոք. Յարութին Արզումանյան եւ պրն. Վիգեն Ադդարեան

Մոնթրեալիայի ծանօթ մտաւորական եւ ազգային դեմք՝ Վիգեն Ադդարեանի հետ ունեցանք սոյն շահեկան հարցազրոյցը, Գանատայի խորհրդարանի երեսփոխանական ընտրութիւններու իր թեկնածութեան կապակցութեամբ: Խմբ.

Հ. Պրն. Ադդարեան, դուք երկար տարիներ է Վեր Գանատայի Լիպերալ Կուսակցութեան մէջ գործօն մասնակցութիւն ունեցած էք: Կարելի՞ է այդ մասին հակիրճ կերպով անդրադառնալ:

Պ. Աւելի քան 20 տարիներ գործօն անդամ եղած եմ Գանատայի Ազատական (Լիպերալ) կուսակցութեան, կամաւոր կերպով աշխատելով այլազան մարզերու մէջ, առաջին տասնամեակին ընթացքին՝ գլխաւորաբար ընտրապայքարներու ժամանակ: Ահընցիք-Քարթիւվիլ ընտրաշրջանէն ներս բոլոր դաշնակցային ընտրական աշխատանքներու մասնակցած եմ որպէս կամաւոր, համակարգիչի պատասխանատու, մետիայի հաղորդակցական կապերու պատասխանատու, եւլն: 2005-ին դիմում ներկայացուցի որ աւելի խորունկ եւ մտաւորական կերպով ներդրում ունենամ եւ ընդունուեցայ անդամ ներքին քաղաքական ուղեգիծի յանձնախումբին, որ կը պարփակէ մօտ 20 անդամներ որոնք իրենց տարբեր մասնագիտութիւններով եւ կարողութիւններով կ'որոշեն Լիպերալ կուսակցութեան ընդհանուր քաղաքական ուղեգիծը, որ իր կարգին կը ներկայացուի որպէս քաղաքական ծրագիր կուսակցութեան միւս մարմիններուն եւ որպէս հիմք կ'օգտագործուի խորհրդարանէն ներս մեր երեսփոխաններուն, նախարարներուն, վարչապետին, եւ այլազան կուսակցական ղեկավարներու կողմէ: 2006-ին ընտրուեցայ անդամ այդ յանձնախումբին, ապա նշանակուեցայ այդ մարմնի փոխ-ատենապետը ու 2012-ին ընտրուեցայ անոր ատենապետ: Առաջին ոչ-Գանատա ծնած անձն էի որ այդ պաշտօնին կ'արժանանար Լիպերալ կուսակցութենէն ներս: Նոյնպէս դարձայ անդամ Կուսակցութեան Գործադիր Մարմնին եւ անդամ ամբողջ Գանատայի ուղեգիծի յանձնախումբին, ինչպէս նաեւ անդամ եմ ընտրա-հարթակի (platform) յանձնախումբին, որ այդ ծրագիրը կը ներկայացնէ հանրութեան:

Հ. Ուրեմն բաւական պարտաւոր կապեր ունիք կուսակցութեան մէջ:

Պ. Այո, ունիմ բարձր մակարդակի կապեր: Տարիներ է Վեր, Ընտրապայքարի Յանձնախումբի եւ Քաղաքական Ուղեգիծի պաշտօնիս բերմամբ ամէն ամիս ժողով կուսենամ նախկին նախարարներու եւ այլ պաշտօնատարներու հետ, քաղաքական այլազան վիճաբանութիւններու կապակցութեամբ, որոնք տեղի կուսենան խորհրդարանէն ներս, իմ ներդրումս բերելով այդ հարցերուն մէջ: Կուսակցութիւններ իրենց դիրքորոշումները հարեանցի կերպով չեն առներ, այլ այդ ամբողջը մտածուած կերպով կ'ըլլայ որոշ ուղեգծային հեռանկարներ ունենալով: Այդ աշխատանքին մաս կը կազմեմ ես:

Հ. Ձեր ընտրաշրջանին մասին կրնա՞ք արտայայտուիլ - բնակչութեան, քուէարկողներու, հայութեան թիւին, եւլն:

Պ. Ահընցիք-Քարթիւվիլը այն շրջանն է ուր ես բնակած եմ մօտ 15 տարի եւ մօտէն ծանօթ եմ շրջանակին: Բնակչութեան թիւը մօտ 110 հազար է: Անշուշտ ոչ բոլորը քուէարկելու իրաւունք ունին: Մօտ 80 հազարը Գանատացի քաղաքացիներ են եւ կան մեծ թիւով ներգաղթողներ զանազան երկիրներէ եկած: Սակայն պէտք է շեշտել թէ այս առաջին ներքին թեկնածուական ընտրութեան հանգրուանին, ոչ-քաղաքացիներ ալ, կրնան կուսակցութեան անդամ ըլլալ եւ քուէարկել: Հայութեան թիւը մօտ 4000 է, եւ կը ներկայացնէ Գանատայի ամենահայաւառ ընտրաշրջաններէն մին: Այլ ազգերու մեծ զաղութներ կան, ինչպէս՝ Իտալացիներու (8000), Յոյներու (5800), հսկայ արաբախօս գաղութ մըն ալ կայ՝ զանազան արաբական երկիրներէ գաղթած:

Հ. Հայ համայնքին կողմէ ձեզի հետ պրակցութիւնը բաւարար կը նկատե՞ք:

Պ. Անշուշտ որ հայ համայնքին կողմէ ունիմ բաւականին ուժեղ զօրակցութիւն, ներառեալ գլխաւորաբար՝ Թեքեան Մշակութային Միութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան, ՀԲԸՄ-եան, Ս. Գրիգոր Շար. էջ 13

ԵՐԵԻՎԱՆԻ «ԳԱՖԵՍՏԵԱՆ» ԱՐՈՒԵՍՏԻ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԵՉ՝ «ԱՐԹՕ ՉԱՔՄԱՔՏԵԱՆ. ՎԵՐԱԾՆՈՒՆԴ»

Վերջերս Երեւանի մէջ յատուկ երեկոյթ կազմակերպուեցաւ հայկական ժամանակակից գեղարվեստի մեծանուն վարպետներէն՝ քանդակագործ ու նկարիչ Արթօ Չաքմաքեանի ի պատիւ:

«Արթօ Չաքմաքեան վերածնունդ» նորաբաց այս ցուցահանդեսի շրջագծով ապրուեցաւ մեծ ոգեւորութիւն: «Գաֆեստեան» արվեստի կեդրոնի համալիրէն ներս բացուած ցուցահանդեսին շրջագծով ներկայացուած են վեց տասնամեակէ աւելի ժամանակէ մը ի վեր ստեղծագործական աշխատանք ծաւալած արուեստագետի նկարներն ու քանդակները, որոնք գեղարուեստասերներուն կողմէ անմիջական հետաքրքրութեան առարկայ կը դառնան: Մինչեւ Օգոստոսի 30 բաց պիտի մնայ այս եզակի ցուցահանդեսը, որու առթիւ Արթօ Չաքմաքեանը ըսաւ, «Ժամանակները փոխուած են. այսօր աւելի ազատ կը ցուցադրուինք: Ուրախ եմ, որ արուեստը հետզհետէ աւելի մեծ ազատութիւն կը ստանայ, որովհետեւ արուեստն է, որ պէտք է մարդուն՝ ոչ թէ ուսելիքը: Հարիւրէ աւելի արձան ունիմ, սակայն գէթ մէկ հատը չէի կրցած բերել: Այստեղ ներկայացուած է այն ինչ կայ Հայաստանի մէջ, իմ անձնական եւ մասնաւոր հաւաքածոներէն»: Արթօ Չաքմաքեան ուշադրութիւն հրաւիրեց «Հայաստանի մուտքը» արձանին վրայ, որ կը ցոլացնէ դրուագ մը, ուր ձեռքերը երկինք պարզած մարդը կանգնած է ոչ-խարի մը վրայ: Քանդակագործը մտադիր է զայն տեղաւորել օդակայանի ճանապարհին: Ցուցահանդեսին շրջագծով ներկայացուած են իր զանազան տարիներու քրաներկով, թանաքով եւ այլ նիւթերով աշխատանքները, ինչպէս նաեւ շարժումով ու կեանքով լի պրօսզէ արձանները:



Այս իր՝ Նարեկացիի արձանը, ու հասկցայ թէ պէտք է վերընթերցեմ Նարեկը, այնուհետեւ նման կերպով մօտեցայ իր բոլոր ստեղծագործութիւններուն: Ծանօթանալու համար պէտք է տիրապետել, ներսուզուիլ այն ամբողջ փիլիսոփայական հետաքրքրութիւններու բնագաւառներուն մէջ, զորս հետաքրքրած են արուեստագետը: Չաքմաքեանէն կարելի է սորվիլ աշխատութեան իւրայատուկ տեսակ մը առաջին օրէն իսկ: Եզակատուսէն Հայաստան գալով ան կը փնտռէ ու կը գտնէ նկարչական ուսումնարանը, ուր ան կ'ընդունուի»:

Շուշան Վարդանեան աւելցուց, թէ շատեր չեն գիտեր որ վարպետը նաեւ մեծ տեսաբան մըն է, հեղինակ արուեստաբանական եւ տեսաբանական գրառումներու: Արթօ Չաքմաքեան որ ծնած է Գահիրէի մէջ, տասներկու տարեկանէն սկսած է զբաղիլ քանդակագործութեամբ: 1948 թուականին իր ընտանիքին հետ եղած է հայրենադարձ եւ խորհրդային տարիներուն աւարտած է Երեւանի Գեղարուեստի ուսումնարանը եւ Երեւանի Գեղարուեստաթատերական կաճառի քանդակագործութեան բաժինը: 1975 թուականին ան հաստատուած է Գանատա եւ միայն անկախութենէն վերջ է, որ վերադարձած է Հայաստան:

Սուրիոյ, Լիբանանի եւ Իրաքի հայերը օտար պետութեան մէջ ՀՀ անձնագիր պիտի ստանան մինչեւ 2016 թ. վերջը

ՀՀ կառավարութիւնը կը քննարկէ իր նախկին որոշումներէն մեկուն փոփոխութիւն կատարելու նախագիծը, որմով մինչեւ 2016 թուականի Դեկտեմբեր 31 հնարաւորութիւն կու տայ Լիբանանի, Սուրիոյ եւ Իրաքի քաղաքացիներուն ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւններուն եւ հիւպատոսակալ հիմնարկներուն մէջ ստանալ ՀՀ քաղաքացիի անձնագիր: Ըստ Armenpress.am-ի՝ նախագիծը ընդգրկուած է կառավարութեան Օգոստոս 6-ի նիստի օրակարգին մէջ:



Նախորդ որոշմամբ՝ նշուած երկիրներու քաղաքացիները օտար պետութեան մէջ ՀՀ անձնագիր կրնային ստանալ մինչեւ ընթացիկ տարուան Սեպտեմբեր 1: Որոշումը կ'ընդունուի՝ մեկնելով Լիբանանի, Սուրիոյ եւ Իրաքի մէջ ստեղծուած իրավիճակէն:

ԱՐԱՐԱՏ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ (ԱԲ)

Ս. Խաչ Եկեղեցւոյ ճամբարի երախաները այցելեցին ԱԲ

Կեսօրուան ճաշի ժամն է երբ կարգապահութեամբ ներս մտան քսանի չափ մանուկներ Տէր Կոմիտասի առաջնորդութեամբ: Կ'ըսենք կարգապահութեամբ, սակայն երեցներս ծափերով ու ուրախութեան ճիչերով մթնոլորտը վերածեցինք մտերմիկ ու ջերմ:

Արդարեւ Տէր Հայրը բացատրեց թէ այսօր, 24 Յուլիս 2015, վերջին օրն էր իրենց ճամբարին, եւ պզտիկները, որոնցմէ շատեր խառնածին են եւ հայերէն չեն սորված մինչեւ այսօրս, եկած են դարերու մէջէն արձագանգող Հայ Առաքելական Եկեղեցւոյ աղօթքներն ու նորանոր հայրենական երգերը մեզի երեցներուս ներկայացնելու:

Պատիւ մեր ազգին:



Ճաշէն վերջ ճամբարին պատասխանատու երկու երիտասարդուհի ճամբարի օգնական տիկիներ, շաբթի ու կարգի կայնեցուցին բոլորը հասակի կարգով, բոլորը պատրաստ Կոմիտաս քահանայ ղեկավարին: Նախ խոշոր խաչակնքում մը, Անուն Հօր եւ Որդւոյ, որուն կը հետեւի Տէրունական աղօթքը: Սոսկալի յուզում մը պատեց մեզի: Կ'ըսեմ սոսկալի որովհետեւ փոքրիկներուն բերնէն ելած աղօթքը կը պարունակէ նախ հրաշք մեր գոյութեան, եւ երկրորդ որ անոնք գայլերու կեր չըլլան: Ի՞նչ ըսեմ հապա Սարգստայան-ի *Չանգեր, ղողանջէք, Մեր Սրբական Զաջերին ես, չքնաղ Գետաշէն-ի Բազմեր ես լեռներին, ունես հապար շեմ, Արծիւներու բոյնն ես, չքնաղ Գետաշէն* քաջասիրտ երգերուն: Սիրեմ ես առաջին շաբթին կայնած պըտըրիկ Սարգիսը որ քիթիկը ձեռքի տետրին փակցուցած կը ջանար հետեւիլ:

ԱԲ-ու ձեռնարկներու պատասխանատու Սիլվիկը փոքրիկներուն բաժնեց գունաւոր մատիտներով ներկելիք թղթիկներ խոստանալով նուէրներ ամենալաւ ներկողին: ԱԲ-ու ժիւրիին համաձայն ահա արդիւնքը.

- Առաջին մրցանակ. Ալլա Կարապետեան 10 տարեկան
 - Երկրորդ մրցանակ. Լիանա Պապեան 10 տարեկան
 - Երրորդ մրցանակ. Սարգիս Ծովիկեան 6 տարեկան
- Սրտագին շնորհաւորութիւններ եւ շնորհակալութիւններ Ս. Խաչի



Նուիրեալ ճամբարի երիտասարդ օգնականներուն՝ Նարինէ Խուլեանի եւ Մակայի Հաճիպալեանի, առաջինը ուսուցչուհի Կիրակնօրեայի, երկրորդն ալ կրօնի: Շնորհաւորութիւններ նաեւ այն ծնողներուն որոնք առիթը չեն փախցներ իրենց զաւակները դարբնելու համար հայկական շրջանակի մէջ:

Բ. ՏՐԴԱՏԵԱՆ ԳՈՒՅՈՒՄԵԱՆ

Հայկական բանակը կը համալրուի քանի մը տասնեակ նոր սպաներով

Օգոստոս 3-ին, Հայաստանի զինուած ուժերը համալրուած են քանի մը տասնեակ նոր սպաներով, որոնք աւարտած են ռազմական կրթական ուսումնառութիւնը:

Աւարտական պաշտօնական արարողութիւնն ու սպայական ուսադիրներու յանձնումը կայացած է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան վարչական համալիրին մէջ: Հայաստանեան եւ արտերկրի ռազմաուսումնական հաստատութիւններու շրջանաւարտներու երդման արարողութենէն ետք, աւանդոյթի համաձայն, անոնց յանձնուած են ուսադիրներ ու սպայական դաշոյններ:

Արարողութեան ներկայ եղած է նաեւ նախագահ Սերժ Սարգսեան:

«Մի երկրում, որի սահմաններին պարբերաբար կրակում են, դուք ընտրել էք ռազմիկի եւ սպայի մասնագիտութիւնը, դուք ձեր կեանքը կապել էք հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործին, ահա ինչու մենք հաւատում ու վստահում ենք ձեզ», ըսած է նախագահը:

Բացի Վազգէն Սարգիսեանի անուան ռազմական ինստիտուտի, մարշալ Արմենակ Խանփերեանցի անուան ռազմական օդազնացութեան ինստիտուտի ու Բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետի պատրաստած քատրերէն, պաշտպանութեան



Նախարար Սէյրան Օհանեան շնորհաւորած է նաեւ բարձրագոյն հրամանատարաշտապային դասընթացքները աւարտած եւ ակադեմական կրթութիւն ստացած սպաները:

Նախարար Օհանեան նշած է, որ անոնք հայոց բանակի սպայակազմի լաւագոյն մասը պիտի կազմեն:

Հայոց բանակի նոր սպաները այցելած են Հայոց Տեղասպանութեան զոհերու յուշահամալիր եւ Եռաբլուր զինուորական պանթոն:

Սելահաթին Տեմիրթաշ կը քննադատ քիւրտերու դէմ Թուրքիոյ գործողութիւնները

Անակնկալօրէն Պրիւսէլ այցելած քրտամետ ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան համանախագահ Սելահաթին Տեմիրթաշ «անարդար պատերազմ» որակեց քիւրտերուն վրայ թրքական յարձակումները՝ միաժամանակ կոչ ուղղելով Եւրոպական Միութեան, որ դատապարտէ յարձակումները եւ յստակօրէն նեցուկ կանգնի քրտական հաշտութեան հուրվոյթին:

Ան կրկնեց, թէ թրքական յարձակումներուն գլխաւոր թիրախը եղած են ոչ թէ «Իսլամական պետութեան», այլ քրտական աշխատաւորական կուսակցութեան դիրքերը:

ԱԶԳԻՆ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐԸ՝ ՆԱԶԱՐ ՆԱԶԱՐԵԱՆ

(Ծննդեան 90-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ)

ՅԱԿՈԲ ՎԱՐԳԻՎԱՌԵԱՆ

Անցնող աւելի քան քսանամեակին Նազար Նազարեանի անունը ամենուրեք դարձաւ հոմանիշ անսակարկ նուիրումի, հոգատար խնամքի, հայրական գուրգուրանքի, սրտբաց հետաքրքրութեան եւ իշխանական նուիրատուութեան, ամբօրէն կապուելով՝ ազգային կրթական, եկեղեցական, բժշկագիտական, բարեսիրական ու հրատարակչական աշխարհներու բնագաւառներուն հետ: Մնալով հանդերձ առաջնորդող դէմքերէն հայրութեան նախամեծար բարեսիրական կազմակերպութեան՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, ան իր բարերարի ձեռքը երկարեց ազգային գրեթէ բոլոր մեր կառոյցներուն: Անոնք տարածուած ըլլան Հայ Սփիւռքի թէ Հայրենիքի մէջ:



մասերուն վրայ: Եւ այս բոլորը կատարելու համար ստիպուած մնացի մօտիկ իր առեւտրական կեդրոնին՝ Քըրնի տիւ ու գիշեր հսկելու իր մեծ համալիրը:

ԱՆԿԵՐԱՊԱՅ ՅԱՐԳԱՆԸՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՄԱՅՐ ԱՌՈՒԻ ՆԿԱՏԱՄԱՐ

Նախ պետք է ըսեմ որ Նազարեան ունի մեծ յարգանք հայ հոգեւորականին նկատմամբ: Անոր յարգանքը սկսած է դրսեւորուիլ Ամերիկայի Նախկին առաջնորդ ու Երուսաղէմի ընտրեալ պատրիարք Տիրան Արք. Ներսոյեանէն (Նազարեաններու նման ինք եւս բնիկ այնթապցի): Ան որպէս ընտանեկան բարեկամ քաջալերած է Նազարը մասնակից դառնալու ազգային եկեղեցական կեանքին: Իր գրասենեակը միշտ բաց է եղած արտասահմանէն այցելող ամեն հոգեւորականի առաջ՝ յաճախ բանալով անոնց նաեւ իր գրպանը՝ երբ եղած է որեւէ դիմում ու խնդրանք:



Իւրաքանչիւր հաստատութեան, միութեան, եկեղեցիին, կազմակերպութեան, դպրոցին ու թերթին ցաւերուն եւ ապագայի ծրագիրներուն եւ ջանացած է իր ազնուափայլ տիկնոջ՝ մեծ հայուհիին՝ Տիկին Արտեմիսին հետ հասնիլ առատօրէն. սակայն աւելի կարեւորը՝ խոր համոզումով ու գիտակցութեամբ թէ մեր ազգային հաստատութիւնները կը կատարեն բացառիկ գործ ազգապահպանման եւ-

Այսպէս, իր մօտ այցելութեան բերած են Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Շնորհք Արք. Գալուստեանը, Արեւմտեան Թեմի առաջնորդ Վաչէ Արք. Յովսէփեանը, Վիեննայէն Մեսրոպ Արք. Գրիգորեանը, Արեւելեան Թեմի Առաջնորդ ու ապա Երուսաղէմի Հայ Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանը եւ այլ հոգեւոր հայրեր: Միշտ ալ ուզած է որ ես

Օգոստոս 2-ին, Նազարեան գերդաստանի անդամները, բարեկամները, հայրենակիցները, գործակիցները հաւաքուած պիտի նշեն ազգին մեծ բարերարին՝ Նազար Նազարեանի 90-ամեակը, իր բնակավայրի՝ Նիւ Ճըրզիի մէջ: Անոնք պիտի հաւաքուին իրենց երախտագիտութեան զգացումները յայտնելու եւ շնորհաւորելու իրեն մաղ-

Միացեալ Նահանգներու (Էլլիս Այլընտ) զանազան բարձրագոյն պարգէններուն: Իր ստացած շքանշանները կ'ամրանան իր բարախուն կուրծքին վրայ, որ լեցուն է հայու ջերմ զգացումներով: Սակայն ատկէ աւելին՝ ն անտարակոյս արժանացած է հայ ուսանողին, համալսարանականին, միութենականին, մտաւորականին, հոգեւոր-



թելով արեւշատ ու առողջ տարիներ: Նազար Նազարեան արժանացած է մեր եկեղեցւոյ (Ս. Գրիգոր Լուսաւորիչ) թէ պետութեան (Մովսէս Խորենացի), ինչպէս նաեւ՝

րականին, գրողին, խմբագրին ու նաեւ՝ գաղափարական մարտիկին անսահման ու անսակարկ երախտիքին: Իր աւելի քան 60 տարիներու ազգային լայն հետաքրքրութեանց շրջանին ծանօթ է եղած մեր

կան եւ անյետաձգելի առաքելութեան եւ հայրենիք-սփիւռք կապերու ամրապնդման գործին մէջ:

Պարոն Նազար Նազարեանի կատարած բարերարութիւններու թուարկումը թողելով ուրիշ առթիւ, որդիական պարտականութեամբ մը կ'ուզեմ քանի մը մտերմիկ պահեր թուղթին յանձնել. այդ կ'ընեմ ամենայն բարեխղճութեամբ տաս տարիներ մնայուն կերպով իր հաստատութեան մէջ ծառայելով ու զինք մօտէն ճանչնալով, իր ուրախ ու տխուր պահերը բաժնելով, իր առանձնութեան պահերուն իրեն խօսակից դառնալով, ընտանեկան իր հաւաքոյթներուն մասնակից դառնալով: Եւ մանաւանդ վստահելով իր լայնածաւալ գործատեղին, շտեմարաններն ու գրասենեակները ինձի, ապահովելու համար անոնց սահուն ընթացքը, հարիւրաւոր պաշտօնեաներու թէ գործաւորներու առօրեայ հոգսը ինձի վստահելով եւ այս ամբողջին ֆիզիքական ապահովութիւնը երաշխաւորելու իր ցանկութեամբ: Եւ վերջին շրջանին՝ շարունակելու իր անմիջական գործակիցին՝ Հենրի Տիմիճեանին գործը, ճամբորդելով զանազան երկիրներ աշխարհի չորս ցամաք-

ներկայ գտնուիմ գրասենեակի այդ իր հանդիպումներուն, կարենալ շարունակելու համար զանազան հրատապ նիւթերու մասնակցութիւնը եւ արձանագրելու կարգ մը մտածումներ: Հիւրասիրած է գաւնոնք իր գործատեղիին մօտ եղող լաւագոյն ճաշարանները եւ երբեք ձեռնունայն չէ առաջնորդած գաւնոնք դէպի ինքնաշարժ: Անոնց մեկնումէն ետք, յաճախ նիւթ դարձուցած է անոնց խնդրանքները... երբեմն թերահաւատութեամբ թէն մօտեցած է անոնցմէ ոմանց, սակայն միշտ կարեկցելու մտահոգութեամբ կատարած է իր խոստումները: Իւրաքանչիւր այցելութենէ ետք, մոռցած իր առօրեայ առեւտրական աշխատանքը, կը փակեր իր գրասենեակին դուռը եւ ցաւ կը յայտնէր «մեր աղքատ ժողովուրդին» համար...:

Իրեն համար, ինչպէս իր գերդաստանին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կը մնար հաւատքի մեր կեդրոնը, նախամեծար Սուրբ Աթոռը եւ անհուն յարգանք ունէր Վազգէն Առաջին Ամենայն Հայոց Հայրապետին նկատմամբ: Օր մը կ'ըսէր

ՀԱՅ ԿԻՆՈԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ՕՓԵՐԱՅԻՆ ԱՐՏԱԱՀՅՄԱՆԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարցազրույցը վարեց՝
Յ. ԱԲԵՏԻՔԵԱՆԸ

Հարցազրույց Ժիրայր Փափագեանի հետ*

- Սիրելի Ժիրայր, Դուք այս տարի եւս մասնակցեցիք «Ոսկե ծիրան» փառատօնին, հանդիսությունների հանդիսավարն էիք, նաեւ մեր հանդիսականի կողմից ջերմորեն ընդունուած Ռոբերտ Կետիկեանի «Խենթ պատմություն» ֆիլմում հանդես եկաք Նեմեսիս շարժման ղեկավարներից մեկի դերով, ինչը նոյնպէս տպաւորեց մեր կինոսիրողներին: Այս տարուայ փառատօնը բաւական սուր քննադատութեան ենթարկուեց ոմանց կողմից, մեր թերթում էլ եղան քննադատութիւններ փառատօնին ներկայացուած հայկական կինոնկարների մասով, որոնք քիչ եւ թոյլ էին: Կարո՞ղ ենք իմանալ Ձեր կարծիքը փառատօնին մաս կազմած հայկական կինոնկարների վերաբերեալ: Ըստ Ձեզ ո՞րն է պատճառը հայկական կինոարտադրութեան թուլութեան:

- Գլխաւոր պատճառը փողն է, ֆինանսների պակասը: Մասնագիտական որակ ապահովելու համար պէտք են նիւթական լայն միջոցներ: Օրինակ, հայկական կինոֆիլմերի ամենաթոյլ մասը սցենարն է, հետաքրքրական սիւժէն չեն ստեղծում մեր գրողները, տիպիկները շատ թոյլ են: Այնինչ գիտենք, որ լաւ սցենարը 50 տոկոսն է տուելալ ֆիլմի յաջողութեան:

- Իսկ ի՞նչ պէտք է անել լաւ սցենարներ ունենալու համար:

- Այդ հարցին պատասխանելու համար պէտք է սկսել թատրոնից, թատերագրութիւնից: Մշակութային ասպարէզում թատերագրութիւնը ամենաթոյլ մասն է մեր արուեստի, գրեթէ զերօ մակարդակ ունենք: Ժողովրդի ընկալունակութեան տեսակէտից թատրոնն ու նրան յաջորդող կինոսցենարն ամենաազդեցիկն են նոր գա-



ղափարներ առաջացնելու, նոյնիսկ յեղափոխութիւն հրահրելու տեսակէտից: Յետեւաբար, բնապետական ռեժիմների համար բոլոր արւեստներից «ամենավտանգաւորը» եւ, ուստի, ամենաշատ ճնշման ենթական թատրոնն է: Թատերական արուեստը զարգացած է միայն այն երկրներում, որտեղ պետական մեծ փող է յատկացուում եւ խօսքի ազատութիւնն է տիրում, դեմոկրատիան է տիրապետում: 19-րդ դարի վերջերին թատրոնը Օսմանեան կայսրութիւնում հայերիս մոնոպոլիան էր: Մեր գրողները իրար հետեւից ստեղծում էին թատերական գործեր: Սակայն հազիւ սկսած, ընդամենը մի տասնամեակ, ամեն ինչ կանգ առաւ 1878-ին, երբ արգելուեց հայերէն լեզուով խաղալ:

- Բայց յետագայում, խորհրդային ժամանակահատուածում մենք հրաշալի թատրոն ունեցանք:

- Այո, թատրոն՝ որպէս դերասանական արւեստ ու ռեժիսուրա: Սակայն թատերագրութիւն՝ ոչ: Փափագեանները, ներսիստեանները, Աճեմեանները խաղում ու բեմադրում էին դասական, նախկինում ստեղծուած գործեր: Բայց ժամանակակից թատերագրութիւն չկար, կամ էլ շատ թոյլ էր: Ամեն սիւժէի հանգուցալուծումը պէտք է տեղի ունենար նախապէս որոշուած, սոցիալիս-

տական կաղապարների համաձայն:

- Ուրեմն ի՞նչ պէտք է անենք հիմա:

- Հիմա ազատութիւնը կայ, բայց փողը չկայ: Պէտք է թատերագրութիւնը եւ կինոսցենար գրելու տեխնիկական զարգացնել, դաստիարակել ու կրթել մեր երիտասարդներին, մասնագետներ հրաւիրել դրսից, կրթութեան ուղարկել դուրս: Մանաւանդ պէտք է յաղթահարել ներքին փակւածութիւնը, պէտք է դուրս բերել մարդկանց այն հոգեբանութիւնից, թէ միայն իրե՛նք գիտեն եւ ամբողջ աշխարհը ոչինչ չգիտի: Այստեղ չակերտաւոր մեծամտութիւն կայ, գրեթէ անգիտակից մեծամտութիւն: Ամերիկեան ֆիլմերը կառոյցի ու դրսեւորման օրէնքներ ունեն, յստակ ֆորմուլա-ներ, սխեմաներ, որոնք այստեղ բծիծաղ են առաջացնում: Պէտք է հիմնովին փոխուեն կարծրատիպերը, յատկապէս սցենարի ոլորտում: Պէտք է վերջնականապէս ձերբազատուել Փարաճանովի, Փելեշեանի, Տարկովկո կազդեցութիւնից: Պէտք է ձերբազատուել բարդ, անհասկանալի բաներից, կեղծ-խորհրդաւոր եւ խորհրդանշական մօտեցումներից:

- Վերադառնալով «Ոսկե ծիրանին», ուրիշ ի՞նչ խնդիր առաջացրեց Ձեր մէջ:

- Իսկապէս, այս տարի նախատեսուած չէր, որ հանդիսավար լինեմ: Փաստօրէն Ռոբերտ Կետիկեանի (Գեղիգեան) ֆիլմի առիթով եկայ: Սակայն բոլոր գործընկերներս խորհուրդ տուեցին... հանդիսավարել: Փառատօնի մասին կարծիքս դրական է: 12 տարի այս ամենին դիմանալը, կարծում եմ, շատ բարդ փորձութիւն է: Շնորհաւորելի է անպայման Յարութիւն Խաչատրեանը: Մնացածը քննարկման հարցեր են, որոնք արժէ քննարկել, գաղափարներ ներկայացնել: Եւ յատկապէս քննարկել հայաստանեան մասնակցութեան հարցը՝ ֆիլմերի քիչ եւ թոյլ լինելու հարցը, դրա պատճառները: Այսուամենայնիւ ֆիլմերի քանակը այնքան էլ կարելու չէ:

Շար. էջ 14

ՏՕՔԹ. ՍԻՄՈՆ Գ. ՍԻՄՈՆԵԱՆ «ԷԼԻՍ ԱՅԼԸՆՏ»Ի ՄԵՏԱԼԿԿԻՐ ՄԵԾԱՐՈՒՄ Հ.Բ.Ը.Մ. ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Սփիւռքահայ իրականութեան մէջ, մեր ապրած երկիրներու հայ համայնքին զանազան կարիքներուն հասնելու, ծառայելու, նուիրելու, տալու մղումը ինքնաբերական ու յաճախ բնագոյային երեւոյթ մը դարձած է: Պատճա՞ռը. մեր կոտորակուած ըլլալէն կու գայ, մայր հողէն հեռու, կազմակերպուած նոր կեանք մը ապրելու ձգտումէն կու գայ... Եւ այսպէս տասնամեակներ շարունակ: Տասնհինգ թուականի բռնազաղթէն ետք, նորանոր գաղթերով հասանք միևնույն Ամերիկաներ ու Աւստրալիա, որոնք մեզի պարտադրեցին նոր կեանք եւ նոր կացութիւն: Եւ մենք, մեր աշխատանքով յաջողեցանք ոտքի կանգնիլ եւ ոտքի պահել մեր ազգային, քաղաքական, մշակութային, բարեսիրական կազմակերպութիւնները, մեր եկեղեցին:



Անտարակոյս, յաջողութեան ձգտող եւ այդ յաջողութիւնը նուաճող երիտասարդներէն մեկը եղած է եւ է՝ նաեւ Տօքթօր Սիմոն Գրիգոր Սիմոնեանը, որուն կեանքին հանգրուանները հայուն վերջին 100-ամեայ պատմութեան մէկ պատկերն են:

Ցեղասպանութենէն վերապրած սերունդի զաւակ Սիմոն Սիմոնեան ծնած է Պէյրութ, Լիբանան: 1975-ին աւարտած է Ամերիկեան Համալսարանի (AUB) բժշկական բաժինը,

Հայաստանեայց եկեղեցիին: Գլխաւորած է եւ կը շարունակէ գլխաւորել բարեսիրական եւ մշակութային կազմակերպութիւններ: Եղած է ատենապետը Հ.Բ.Ը.Մ. Հայ Համալսարանականներու Միութեան՝ Լիբանանի մէջ, ատենապետը Թեքեան Մշակութային Միութեան՝ Ֆելատեֆիոյ մէջ, փոխատենապետը Միացեալ Նահանգներու Հ.Բ.Ը.Մ.-ի եւ ատենապետը՝ Ա.Մ.Ն.-ի Հ.Բ.Ը.Մ.-ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովին: Եղած է անդամ Թ.Մ.Մ. Հիւսիսային Ամերիկայի Կեդրոնական Վարչութեան, եւ այդ շրջանին մեծ աշխատանք տարած Ալթատիսայի Թ.Մ.Մ. Պէշկեթիւրեան կեդրոնի հիմնադրման մէջ:

Ներկայիս, Տօքթօր Սիմոնեան կը վարէ ատենապետութիւնը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի «Չուարթնոց» մշակութային յանձնախումբին, կազմակերպելով գրական եւ մշակութային բարձրորակ ծրագիրներ:

Եկեղեցիէն եւ ամերիկահայ գաղութէն ներս իր բերած ծառայութիւններուն առ ի գնահատանք, 2011 թուականին Տօքթօր Սիմոնեան արժանացած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի սրբատառ կոնդակին եւ «Ս. Ներսէս Շնորհալի» մետալին: Ի դէպ, 1988-

ին հիւսիսային Հայաստանի մէջ պատահած ահաւոր երկրաշարժէն ետք, ան երկու տարի շարունակ մեկնած է Հայաստան եւ մասնագիտական իր հմտութիւնները տրամադրած մեր հայորդիներուն:

Տօքթօր Սիմոնեան ամուսնացած է եւ ունի երկու մանչ զաւակ: Մայիս 9-ին, արժանին մատուցուեցաւ անոր, երբ Ամերիկեան ամենահեղինակաւոր «Էլիս Այլընտ» մետալը ստացաւ վեց այլ հայորդիներու եւ խումբ մը այլ արժանաւորներու հետ: Ինչպէս ծանօթ է, այս մետալը կը շնորհուի բոլոր այն անհատներուն, որոնք իրենց շրջանակէն ներս մատուցած են երկար տարիներու բացառիկ ծառայութիւններ:

Այս առիթով, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ասպետներու Համախմբումը՝ իր առաքելութեան գիտակից, Շաբաթ, Օգոստոս 1-ի երեկոյեան պիտի պատուէ Տօքթօր Սիմոն Սիմոնեանը հաւաքոյթի մը ընթացքին: Կը շնորհաւորենք մեծարեալը, մաղթելով անոր քաջառողջութիւն, շարունակելու համար մեր ազգին, եկեղեցիին եւ ընդհանրապէս մարդկութեան իր բերած օժանդակութիւնները՝ մասնագիտութեան եւ ծառայասիրութեան ճամբով:


ՀՐԱԶ ՍԵՓԵՐՔԵԱՆ

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI 17 AOUT 2015

Nouveau programme de coopération entre l'Arménie et les Nations Unies



Le Plan d'aide au développement Nations Unies-Arménie pour la période 2016-2020 a été signé le 1er août par le Premier ministre d'Arménie Hovik Abrahamian, et Bradley Busetto, coordonnateur résident des Nations Unies en Arménie. Il est doté d'un budget total de 119 M \$ US

Abrahamian a noté, lors de la cérémonie officielle de signature, que l'Arménie avait enregistré des progrès considérables dans la réalisation des objectifs du Programme du Millénaire pour le développement. Le Premier ministre a ajouté que ce document était le troisième de la série, et que les deux périodes précédentes de cinq ans avaient démontré que l'Arménie avait réalisé des progrès significatifs dans plusieurs domaines de la vie publique.

Le Premier ministre a également exprimé sa confiance envers ce nouveau programme qui contribuera grandement à assurer le bien-être des résidents du pays.

Busetto, pour sa part, a noté que le programme constituait le cadre de la coopération entre l'Arménie et les Nations Unies, et reflétait la vision de collaboration. Il a déclaré que ce plan était un outil stratégique pour la planification de l'aide de l'ONU, et que ce plan reconnaissait les progrès de l'Arménie, et présentait des solutions innovantes pour répondre aux défis auxquels le pays était confronté.

Le Parlatino reconnaît le génocide arménien



Le Parlement latino-américain (Parlatino), représentant 23 pays d'Amérique latine, a approuvé le 31 juillet dernier, une résolution reconnaissant le génocide arménien.

Le Parlatino est un organisme interparlementaire formé par les membres des parlements des pays d'Amérique latine parties du Traité instituant le Parlatino en 1987. Son siège est à Panama.

Cette nouvelle reconnaissance du crime contre l'humanité perpétrés par l'Etat turc, s'ajoute aux résolutions adoptées par les parlements en

Amérique du Sud cette année. « Parmi les nombreux autres sujets abordés par le Conseil exécutif du Parlement latino-américain et de la Déclaration des Caraïbes, la reconnaissance du génocide arménien a été soutenu presque unanimement (une abstention), » a écrit le député de Montevideo Alfredo Asti quelques minutes plus tard. « L'Uruguay a été un pionnier dans le monde avec cette reconnaissance il y a 50 ans et aujourd'hui, nous avons appuyé fermement cette position, » a-t-il ajouté.

L'accord nucléaire iranien offre des dividendes de paix

Editorial écrit en anglais par Edmond Y. Azadian et publié dans The Armenian Mirror-Spectator en date du 23 juillet 2015

L'accord nucléaire iranien est un soupir de soulagement dans certains milieux et un battement de tambour de guerre auprès d'autres.

Le soupir de soulagement se limite, pour le moment, principalement au Moyen-Orient et au Caucase, où la perspective d'une nouvelle guerre était imminente depuis longtemps. Les battements de tambours émanaient d'Israël et de ceux l'appuyant au Congrès américain. Le Congrès des Etats-Unis a rarement fait montre d'une telle unité bipartisane contre le président; les démocrates et les républicains étaient opposés au président Obama, qui avait osé risquer la colère du Premier ministre Netanyahu et procédé à des négociations pour parvenir à un accord avec l'Iran.

Մայրը՝ Տիկին Սաթենիկ բնիկ արաբկիրցի ըլլաւ՝ն համար թէ այլապէս, միշտ յարգալիր է եղած «Պայթար» օրաթերթի երկարամեայ խմբագրին՝ Դոկտ. Նուպար Պերպերեանին նկատմամբ: Վերջին անգամ զիրար հանդիպեցան անցեալ տարի ՌԲԸՄի Էնկլվուտ Գլխֆֆսի նոր կեդրոնին բացման եւ միասին կատարեցին հատուկ ժապաւենին ի ներկայութեան առաջնորդ խաժակ Արք. Պարսամեանի եւ դեսպան Կարեն Նազարեանի: Արդէն գրեթէ տարեկիցներ են անոնք:

Ու այսպէս երկար է շարքը անոնց որոնց հանդէպ ան ցուցաբերած է մնայուն յարգանք:

ՄԵՐԸ ՀԱՆԴԵՊ ՀԱՅ ԳՐՈՂԻՆ

Մեր տունը մի՛շտ բաց է եղած հայ գրողին ու մտաւորականին առաջ: Անոնք երբեմն շաբաթներով հիւրընկալուած են մեր տան մէջ: Պոստ՝ Նազարեան կ'իմանար անոնց ժամանումը, եւ կ'եսօրէ ետքերը կ'ուզէր անոնց հանդիպիլ: Կ'ընդառաջէի, որովհետեւ երբեմն անոնք քամուած կը մնային տան մէջ: Նազարեանի գրասենեակի հիւրեր են եղած՝ հայրենիքէն՝ Սերո Խանգաղեան, Վարդգէս Պետրոսեան, Չօրի Բալայեան, Շահէն Խաչատուրեան, Լուսինէ Չաքարեան, Պելլա Դարբինեան, Յովհաննէս Պատալեան, Փրոֆ. Գեորգ Խրոյրեան, Նկարիչներ՝ Յակոբ Յակոբեան, Սարգիս... սփիւռքէն՝ Կարիկ Պասմաճեան, Տոբթ. Թորոս Թորանեան, Գրիգոր Նորիկեան, Փոլ Կիրակոսեան, Սիմոն Սիմոնեան, ՎահէՎահեան... ու դեռ Միացեալ Նա-

հանգներու զանազան շրջաններէն գրողներ ու մտաւորականներ:

Երջանիկ կը զգար ան այդ իրենց մտերմիկ խօսակցութեանց մէջ: Արեւելահայերէնի իմացութեան դժուարութեան պատճառով, յաճախ կը դառնար ինծի «ի՞նչ կ'ըսէ... մաքուր հայերէնով ինծի ըսէ նայիմ»: Ինչպէ՛ս բացատրէի ...: Ինք ալ գիտէր թէ խօսակցութեան եթէ կ'եսը իմանար արդէն հասկցած կ'ըլլար նիւթը: Նոյնը՝ երբ զանազան երկիրներէ յաճախորդներ գային ու արաբերէն, սպաներէն, փորթուգէլերէն, յունարէն, իտալերէն ու նոյնիսկ ֆրանսերէն խօսէին Նազարեանի կը հասկնար ... ու կը դառնար ինծի հանդիմանական կերպով կ'ըսէր «Ե՛րբ իտալերէն պիտի սորվիս որ մեր յաճախորդին՝ Ամինոյին հետ կարենաս հանգիստ խօսիլ ...»:

Վերջին տարիներուն անհուն սիրով կապուեցաւ ՀՀ ՄԱԿի մշտական ներկայացուցիչ ու դեսպան Կարեն Նազարեանի հետ: ԹՄՄի Նիւ Եորքի մասնաճիւղը կազմակերպած էր բարի գալուստի հանդիպում մը Նիւ Ճորճիի մէջ ի պատիւ դեսպանին ու տիկնոջ՝ Նանային: Ներկայ գտնուեցան Տեր եւ Տիկին Նազարեանները: Այնուհետեւ անոնք մնացին մնայուն բարեկամներ իրարու տալով յաճախակի այցելութիւններ: Յանձնառու եղաւ վերանորոգել Նիւ Եորքի դեսպանատունը ամբողջութեամբ: Ան սիրով կատարեց այդ մեծագումար նուիրատուութիւնը «դեսպանին խաթեր համար» ...:

Նոյնը պատահեցաւ այժմու դեսպանին Չօրիկ Մնացականեանին հետ, երբ ան առաջին անգամ ամերիկահայութեան ծանօթացաւ անցեալ տարի երբ Թեթեանը կը նշէր իմ ազգային հասարակական ծառայութեանս 45-ամեակը: Հրաւիրած էի նորանշանակ պարոն դեսպանը: Ծանօթացուցի զինք մեր ազգին մեծ բարերարին: «Մեր վերջին երկու դեսպանները *աղէկ* մարդիկ են, անոնցմէ առաջնաներուն՝ ակնաջ մի՛ տար» ըսելով մի՛շտ գովքը կը հիւսէ Նազարեանին ու Մնացականեանին:

ՈՒՆԻ ԻՐ ՀԱՐԱՉԱՏ ԾՐՁԱՆԱԿ

Առանձին սեղան չ'ուզէր նստիլ: Իր այս նահապետական տարիքին շաբաթը մէկ անգամ ան կը հիւրասիրէ Մեծագոյն Նիւ Եորքի ծանօթ ազգայինները: Վերջին հնգամեակին իրեն ամենամօտիկ բարեկամը նկատած է Տոբթ. եւ Տիկին Բաֆֆի եւ Չոզակ Յովհաննէսեանները, որոնց ծնողաց ան ծանօթ է եղած Պէրուլթէն: Անոնք մնայուն ներկայութիւն մըն են առօրեայ իր կեանքէն ներս: Սակայն, այդ իր հրաւիրեալներուն մէջ կ'ըլլան ազգային բարերարներ Հերի Թուֆայեան, Սարգիս Պետեւեան, Տոբթ. Յարութիւն Միճեան, ազգայիններ

Տոբթ. Թորոս Չաղլասեան, Շահէ Գեպեճեան, Ժաք Ատանալեան, Յակոբ Գուլումճեան, Խորէն Նալպանտեան եւ ուրիշներ: Ու իր զարմիկը՝ Ալեքս Մարգարեան կ'ըլլայ համախմբողը բնական հասնող այս ազգայիններուն: Իրեն համար մասնաւոր հաճոյք է շրջապատուիլ իր երբեմնի բարեկամներով ու խօսիլ ազգին ցաւերուն մասին:

Պետք է անպայմանօրէն ըսել որ Նազարեան Արտեմիս Նազարեաններուն յարգանք հայ բժիշկներու նկատմամբ: Երբ բարեկամս՝ Պերճ Սեդրակեան առաջին անգամ ծանօթացուց զիս Նազարին, մօտ քառասուն տարիներ առաջ, ան հարց տուաւ ինծի «բժիշկ ազգայիններ ունի՞ս», ըսի «այո՛ւ. հօրեղբայրս, եղբայրս, գարմիկս... բաւական Տոբթ. Վարդիվառեաններ կան մեր ընտանիքին մէջ» եւ յարեց. «դու ինչո՞ւ տոբթոր չ'եղար ...», պատասխան չունէի տալիք: Տարի մը տք, երբ եղբայրս՝ Չարեհ Նիւ Ճորճի եկաւ հաստատուելու, ծանօթացուցի զինք իրեն ... եւ վարկս իր մօտ աստիճան մը եւս բարձրացաւ...:

«Ե՛՛ օր մը տղաս՝ Լեւոնն ալ բժիշկ պիտի ելլէ...»: Չէր սխալած, կրթաւնըր ազգայիններ, անոնք կը հաւատան կրթութեան եւ Լեւոն արդէն ոչ միայն յաջողած բժիշկ է, այլեւ Երեւանի մէջ հաստատած է մասնաւոր դարմանատուն մը իր մասնագիտութեան հետ կապուած: Մօտէն կը հետաքրքրուի ու շարունակական խնամքով զայն կը պահէ բաց մեր հայրենաբնակ հարազատներուն համար: Իսկ դուստրը՝ Սեդան եւս իր ծառայութիւնը կը բերէ հայ արուեստը եւ հայոց իրաւունքները ծանօթացնելու համալսարանական շրջանակներէ ներս: Բարեշնորհ աշխատանք մը անկասկած:

Արձանագրելու ենք նաեւ այն իրողութիւնը թէ Նազարեան ջանացած է իր գրասենեակներէն ու շտեմարաններէն ներս պաշտօնի հրաւիրել հայ պաշտօնեաներ: Ընտանեկան հին սովորութիւն մըն է որ ան ժառանգած է հորմէն ու եղբայրներէն: Իր զարմիկը՝ մօրաքրոջ զակին՝ ճորճ Տեր Յովհաննէսեանին մահէն ետք անոր պաշտօնը յանձնեց ինծի: Այնուհետեւ, յաջորդաբար եկան Սոնիկ Վայեճեան, Օննիկ Գիւնկեօզեան, Հրայր Նազարեան, Մովսէս Գազանճեան, Յակոբ Գրուշեան, Բաֆֆի Գրաճեան, Յովիկ Այազեան, Ալեքս Մարգարեան, Նորայր Սկըրտիչեան եւ ուրիշներ, որոնք ապահով միջավայրի մէջ ունեցան յաջողութիւններ իրենց ասպարէզներէն ներս: Անոնք մի՛շտ մնացին երախտապարտ: Անոնցմէ շատերուն ան եղաւ հայր ու մեծ եղբայր:

Իր 90-ամեայ տարեդարձին առթիւ կը մնայ շնորհաւորել մեր բարերարը՝ բոլորին սիրելի Նազարը, մաղթելով՝ առողջութիւն ու արեւշատութիւն:

Հարցազրոյց Վիգեն Ադդարեանի հետ...

Շար. էջ 3-էն

Լուսաւորիչ Եկեղեցւոյ եւ ուրիշ կազմակերպութիւններու: Սակայն ես կապ հաստատած եմ հայկական բոլոր կազմակերպութիւններու հետ անխտիր եւ ես կը ներկայանամ որպէս բոլոր հայութեան թեկնածուն, որովհետեւ այն հարցերը որոնք մեզ կը մտահոգեն բոլորին հարցերն են: Ունինք հսկայական մարտահրաւերներ Գանատայի մէջ: Ցեղասպանութեան Հարիւրամեակն է եւ անոր լոզունգը միասնականութիւնն է, որ աշխատանքով եւ գործով կը դրսեւորուի եւ այդ հովանիին տակ տեսանք քայլարշաւներ, ցոյցեր եւլն, որոնց ես ալ մասնակցեցայ: Գիտենք որ հակացոյցեր ալ կը կազմուին, որոնք տարուէ տարի կը մեծանան: Գիտենք թէ տեղ տեղ յուշարձաններ կը կառուցուին նուիրուած Թուրք անձնաւորութիւններու կամ Ա. Համաշխարհային Պատերազմի թուրք զոհերու: Մենք չենք կրնար պայքարիլ ոչ նիւթականով, ոչ քաղաքացիական թիւով, որովհետեւ մեր հակառակորդները թիւով շատ աւելի են: Ասոր դիմաց մենք պետք է որակական պայքար տանինք, որ կարենանք իրականացնել խորհրդարանէն ներս կամ նոյնիսկ նախարարութիւններու մօտ մեր գաղութին ներկայութիւնը: Ես այդ ծրագրով է որ կը ներկայանամ: Ունենալ մտաւորական մակարդակ, որ կարենանք բարձր ձեւով ներդրում բերել գանատական կեանքին եւ այդ ներդրումի արժեւորման վրայ հիմնուած՝ ազդեցութիւն բանեցնել կառավարութեան մարմիններու վրայ, նոյն ժամանակ դառնալով սոր սերունդին համար օրինակ եւ ներշնչման աղբիւր երիտասարդներու եւ բանալին ըլլալ անոնց քաղաքական կեանքի մուտքէն ներս: Այս է իմ նպատակս որ կը հետապնդեմ:



3. Ինչպէ՞ս կը գնահատե՞ք ձեր ընտրուելու հաւանականութիւնը:

Պ. Ունիմ շուրջս շատ շատ խանդավառ խումբ մը երիտասարդ-երիտասարդուհիներ, չափահաս-չափահասուհիներ, տարեց-տարեցուհիներ որոնք այս նպատակով եւ տեսիլքով շատ խանդավառուած են: Ունինք բաւական չափով անդամներ որ արձանագրած ենք: Նշանակումի (Nomination) թեկնածուները չորս հոգի են. ես միակ հայն եմ: Կը յուսամ որ հայ գաղութը ամբողջութեամբ զօրաշարժի պիտի ենթարկուի եւ այս ձեւով պիտի կարենանք յաղթահարել: Չենք մասնակցիր պարտութեան հեռանկարով, այլ յաղթելու հեռանկարով:

3. Ընտրապայքարը պաշտօնապէս սկսած է: Իսկ եր՞բ եւ ինչպէ՞ս կը կատարուի նշանակումի ընտրութիւնը չորս թեկնածուներէն:

Պ. Այսօր յայտարարուեցաւ Ահընցիք-Քարթիէվիլ ընտրաշրջանի Լիպերալ թեկնածուի ընտրութեան թուականը, որն է՝ Կիրակի, 23 Օգոստոսը: Գանատայի 338 ընտրաշրջաններէ 30 հատին նշանակումի ընտրութիւնը տակաւին չէ կատարուած: Ուրեմն կոչ կ'ուղղեմ Մոնթրէալի հայութեան անոնց որոնք այս ընտրաշրջանի մէջ կը բնակին եւ արձանագրուած են որպէս Լիպերալ Կուսակցութեան անդամ, այդ օրը գալու եւ քուէարկելու իմ նշանակումին ի նպաստ: Կուսակցութեան անդամներն է որ կ'ընտրեն կուսակցութեան նշանակելու թեկնածուն: Այդ ընտրութիւնը միայն մէկ օրուայ մէջ կը կատարուի, եւ միայն որոշուած վայրին մէջ: Եթէ ես ըլլամ այդ նշանակուած թեկնածուն, անմիջապէս պիտի անցնիմ ընդհանուր դաշնակցային ընտրապայքարին: Շուրջս համախառնութեանը եւ ես պատրաստ ենք ատոր:

3. Ինչպէ՞ս կը գնահատե՞ք Ձեր Լիպերալ Կուսակցութեան այսօրուան վիճակը. ճասթին Թրուտոյի թեկնածութիւնը կը խորհի՞ք թէ դրական կամ ժխտական կերպով կ'ապդուի իր հօր՝ Փիէռ Էլլիըթ Թրուտոյի անցեալի համբաւէն:

Պ. Կացութիւնը շատ փոփոխելի է: Եթէ տարի մը առաջ հարցուցած ըլլայիք, պատասխանը տարբեր պիտի ըլլար: Այսօրուայ հարցախոյզերը հանրութեան մօտ ցոյց կու տան թէ Լիպերալ Կուսակցութեան իշխանութեան գլուխ գալու հաւանականութիւնը աւելի ցած է քան ինչ որ եր անցեալին: Սակայն մեր կուսակցութիւնը կը ներկայանայ Գանատայի ամենախորունկ քաղաքական ուղեգիծի եւ քաղաքական ծրագիրներու ներկայացումով եւ առիթով կ'ըսեմ վստահօրէն, որովհետեւ ատոնցմէ շատերուն հեղինակը ես եմ եւ իմ շուրջ հաւաքուած յանձնախումբի անդամները: Քաջածանօթ եմ բոլոր հարցերուն, ըլլան անոնք կլիմայական հարցեր, տնտեսական հարցեր, ընկերային արդարութեան հարցեր, որոնց մէջ մենք տարիներով աշխատած մասնագէտներ ունինք եւ այն ծրագիրները որ կը ներկայացնենք Գանատային, իրագործելի են եւ կարելի են: Այդ իրագործումի ճամբուն վրայ կը յուսամ թէ հայ եւ ոչ-հայ քաղաքացիները մտիկ պիտի ընեն առաջարկները եւ պիտի քուէարկեն ի նպաստ մեր կուսակցութեան: Գալով Փիէռ Էլլիըթ Թրուտոյի համբաւին, անշուշտ անոր որդին ըլլալը կարելորդ երեւոյթ մըն է, որովհետեւ կ'ենթադրէ արմատներու շարունակականութիւն մը, թէ՛ Լիպերալ քաղաքական մտքի եւ թէ՛ որպէս անունի ծանօթութիւն: Նաեւ տարի մը առաջ երբ տեղի ունեցաւ մեր կուսակցութեան ղեկավարի ընտրապայքարը, կար որոշ խանդավառութիւն մը ճասթին Թրուտոյի թեկնածութեան շուրջ: Տարի մը առաջ ընդհանուր ընտրութեան խօսք չկար եւ մեր կուսակցութիւնը միակն էր որ ուներ աստղ մը որպէս ղեկավար: Ուրեմն հարցախոյզերու մէջ մեր ղեկավարի վարկը բարձր էր: Հիմա մտած ենք ընտրական վիճակի մը մէջ, ուր ընդդիմադիրները յարձակողական դիրքով կը ներկայանան, մանաւանդ հեռատեսիլի եւ այլ միջոցներով: Ատկէ անդին, թէ սխալներ գործուեցա՞ն մեր կուսակցութեան կողմէ, անշուշտ այո, որովհետեւ չկան անսխալական կուսակցութիւններ: Սակայն կը հաւաստիացնեմ թէ մեր կուսակցութիւնը իսկապէս ամենակատարեալ քաղաքական ծրագիրները ունի, որովհետեւ մենք շատ բծախնդիր աշխատանք տարած ենք: Գիտենք թէ ի՞նչ են առաջնահերթութիւնները՝ տնտեսական, ապահովական, քաղաքական եւ այլ հարցերու կապակցութեամբ: Մեր բովանդակութեան մասին մտահոգ չեմ. աւելի մտահոգ եմ թէ քաղաքացիութիւնը մեզ ինչպէ՞ս կը տեսնէ:

3. Վերջին խօսք մը ունի՞ք մեր համայնքին ուղղուած:

Պ. Կ'ուզեմ որ անձերը հարցերու մօտենան ոչ միայն հայկական տեսակետներէ, այլ մօտենան խիղճով, հասկնան թէ ո՞վ են միւս թեկնածուները եւ նժարին վրայ դնեն իմ կատարածներս եւ իրագործումներս, նախ որպէս մասնագէտ ճարտարագէտ, ապա ներդրումներս Գանատայի ի նպաստ, մարդկային իրաւունքներու հարցերու ի նպաստ, հայկական հարցերու համաշխարհային ծանօթացման ի նպաստ՝ հեռատեսիլի եւ այլ միջոցներով. կը կարծեմ թէ քուէարկողին մօտ յստակ պետք է ըլլայ թէ ո՞վ է ամենէն արժանին որ գաղութը ներկայացնէ խորհրդարանին մէջ:

Շնորհակալութիւն Պրն. Ադդարեան այս առիթին եւ ձեր լուսաբանութիւններուն համար: Յաջողութիւն կը մաղթեմ ձեզի եւ կը յիշեցնեմ մեր հայրենակիցներուն որ չթերանան իրենց քաղաքացիական պարտականութեան մէջ, ու գործադրեն քուէարկելու իրենց իրաւունքը թէ՛ Օգոստոս 23-ի նշանակումի ընտրութեան եւ թէ՛ Յոկտեմբեր 19-ի ընդհանուր ընտրութիւններուն:

Աւելի մօտէն ծանօթանալու համար Վիգենին ընդհանուր քաղաքական ծրագրին՝ կը հրաւիրենք մեր ընթերցողները որպէսզի հետեւին իր աշխատանքին իր ընտրական կայքէջին <http://attarian.ca/> եւ կամ ալ Դիմագիրքի (Facebook) <http://www.facebook.com/attarian.ca> ընդմեջէն: Յատկապէս նշելի է իր ներկայացուցած համընդհանուր ծրագիրը թէ ի՞նչպէս կարելի է Գանատան դարձնել աշխարհի լաւագոյն երկիրը բոլոր մարզերու մէջ Help me make Canada no. 1 խորագրով:

«ԱՂԱԳԱՅ»

«Ուաշինկթըն Փոսթ» Ատրպէյճանը նմանեցուցած է Հիւսիսային Քորեային

«Ուաշինկթըն Փոսթ» թերթը հրապարակեց աշխարհի մէջ բռնապետական համակարգը ընտրական գեղծարարութիւններու մասին յօդուած մը, ուր յիշատակութիւն կայ նաեւ 2013-ին Ատրպէյճանի նախագահական ընտրութիւններու եւ Իլհամ Ալիեւի ընտրութիւնը ապահովելու գեղծարարութիւններու մասին:

Պոլսոյ «Նոր Մարմարա»-ն կը հաղորդէ, թէ թերթը բաղադատութիւններ կ'ընէ Ատրպէյճանի ու հիւսիսային Քորեայի միջեւ, ուր անցեալ կիրակի քաղաքապետական ընտրութիւններ տեղի ունեցած էին, եւ ընտրողներու 99.97 տոկոսը իբր թէ մասնակցած էր ընտրութիւններուն: Ամերիկեան հեղինակաւոր թերթը այդ առնչութեամբ կը յիշատակէ նաեւ 2013-ին Ատրպէյճանի նախագահական ընտրութիւնները եւ հետեւեալը կը գրէ.

«2013-ին, նախագահական ընտրութիւններու նախորդող օրը, տակաւին քուէարկութիւնը չէր սկսած, երբ Ատրպէյճանի Կեդրոնական ընտրա-



կան յանձնաժողովը գրպանի հեռաձայններով օգտատէրերուն հաղորդեց ընտրութիւններուն արդիւնքները: Նշուեցաւ որ նախագահ Իլհամ Ալիեւ դարձեալ 72 տոկոսով յաղթանակ տարած էր: Ընդդիմութեան թեկնածուն ալ իբր թէ ընդամենը 10 տոկոս քուէ հաւաքած էր: Սակայն ատեն մը ետք պետական մարմինը հաղոր-

դագրութիւն մը տարածեց, թէ հեռաձայններուն ուղարկուած ցուցանիշները գրանցուած են նախորդ տարիներու ընտրութիւններու ընթացքին եւ սխալմամբ է, որ հրապարակուած են»:

Թերթը կ'ընդգծէ, որ ընտրութիւններուն մասնակցութեան եւ արդիւնքներու նմանօրինակ բարձր ցուցանիշները յատկանշական են բռնապետական երկիրներուն, ինչպիսիք են Հիւսիսային Քորեայ, Ատրպէյճան, Ղազախստան եւ այլն:





Hrair Ketchedian, B.A. Écon.
Directeur Général
 Représentant en épargne collective
 pour Desjardins
 Cabinet de services financiers inc.

450 688-0900, poste 215
Télécopieur : 450 688-1704

Siège social
 3075, boul. Cartier Ouest, Laval (Québec) H7V 1J4
desjardins.com/caissedechomedey

Հարցազրոյց Ժիրայր...

Շաբ. Էջ 6-Էն

Ֆրանսական կինոն, օրինակ, ամերիկեանի համեմատութեամբ քիչ արտադրութիւն ունի, թէեւ Եւրոպայում ամենաաշխոյժն է, ամենաշատ արտադրողն է: Սակայն ֆրանսացիները սկզբունքն օրինակելի է մեզ համար նաեւ՝ քիչ արտադրել, բայց որակ ապահովել: Անգլիացիները, մեկ այլ օրինակ, շատ քիչ են արտադրում, սակայն հրաշալի ֆիլմեր են ստեղծում, իրենց որակով չեն զիջում ամերիկեաններին:

Վերադառնալով մեր կինոարտադրութեանը, կարծում եմ մերոնք պետք է լաւ ուսումնասիրեն ամերիկեան կինոյի բանաձեւերը, ժամանակն է, որ ուշադրութիւն դարձնեն նաեւ կոմերցիոն ֆիլմերին. ոչինչ, մեր մտաւորականները թող քննադատեն, բայց կարող են կինոյի միջոցով փող աշխատել, բիզնեսի մասին էլ պետք է մտածել, որը կարող է երկրին եւ կինոարտադրութեանը օգուտ բերել...

- Դառնանք վերջին շրջանի Ձեր գործունէութեանը, յատկապէս Կաննի փառատօնին մասնակցութեանը:

- Եթէ բախտը բերեց, որ խաղացածդ ֆիլմը Կաննում ընդունուի ցուցադրութեան, ապա մեխանիկորէն հրաւիրում ես այնտեղ: Ռոբերտ Կետիկեանի ֆիլմում նկարահանուեցի ու նրա հետ քայլեցի կարմիր գորգի վրայով: Նա ասաց՝ սմոկինգդ հագիր եւ արի: Իսկապէս լաւ ֆիլմ էր: Վտանգաւոր նիւթ էր՝ ԱՍԱԼԱ... վախենում էինք, որ ասեն՝ հայերը թեռորիստ են... բայց ոչ, շատ լաւ ընդունուեց: Կետիկեանը շատ վարպետօրէն էր շեշտը թեռորիզմից տեղափոխել իր բուն ասելիքի վրայ՝ պատմական ճշմարտութիւնից չես կարող խոյս տալ: Շատ հաճելի էր նրա ֆիլմում նկարահանուելը, ընդհանրապէս նրա հետ աշխատելը:

- Հիմա ինչո՞ւ էք վերադառնում:

- Այս տարի նաեւ ֆրանսական հեռուստատեսութեան մէջ եմ: Նշանաւոր հեռուստատեսիալի՝ Braquo-ի մէջ եմ խաղում: Ամենասիրուած սերիալներից է. բոլորը հետեւում են, շատ պոպուլեար է: Շատ նշանաւոր դերասաններ են խաղում: Մաֆիոզների շէֆն եմ: Իրական կեանքում, հենց որ մտնում եմ սրճարան, մարդիկ վախեցած՝ ձեռքները վերեւ են պարզում...

- Կոմերցիա՞լ է:

- Այո: Դաժան հեռուստատեսիալ է՝ սպանութիւններ եւ այլն: Ֆրանսացիներն անգամ մեզ նման են՝ լաւ ֆիլմ է, ամերիկեան ֆիլմերի պէս, ասում են: Այս վերջին՝ 4-րդ սեզոնին ստիպուած եղայ մի հատուածում թուրքերէն սովորել, դերս էր պահանջում: Մասնագետները եկան, սովորեցրին թուրքերէն տեքստս: Լաւ էլ կարողացայ գլուխ հանել: Ծիծաղս եկաւ: Պոլիս գտնուող ընկերներին էլ պետք է ուղարկեմ: Լաւ կգուարանան...

- Դուք երախտագիտութեան արժանի գործ էք կատարում Տիգրան Չոլխաճեանի (Չոլխաճեան) վաստակը ուսումնասիրելու, ներկայացնելու, միջազգային կատարումներ ապահովելու գործում: Ձեր հիմնած երաժշտաթատերական կենտրոնի գործունէութիւնը շարունակու՞մ է:

- Մենք հիմա կենտրոնի անունը փոխել ենք՝ Տիգրան Չոլխաճեան միջազգային ինստիտուտ է կոչւում: Երեւանի, Գանատայի եւ Անգլիայի գործընկերներս այդ խորհուրդը տուեցին՝ ինստիտուտ բառը շեշտում է գիտակրթական բնոյթը կենտրոնի: Վերջերս ֆրանսացի մի աղջիկ եկաւ եւ Չոլխաճեանի վաստակով խանդավառուած՝ դոկտորական թեզ պաշտպանեց: Հունգարացի հետազօտողներ նոյնպէս հետաքրքրութիւն են ցոյց տալիս: Թուրքիայի թատրոններից ոմանք վերջերս հետաքրքրուում էին՝ «Լեքլեքիջի Հորիոր աղայի» («Կարինէ») օրիգինալ նոտաներն ունե՞նք, Չոլխաճեանը ի՞նչ գործիքաւորում է արել: Այստեղ՝ Հայաստանում, ժամանակին Դազարոս Սարեանը եւ Տիգրան Մանսուրեանը գործիքաւորել են, քանի որ Չոլխաճեանի բուն գործիքաւորումը կորած է համարում: Ես միշտ ասում եմ, որ ես դաշնամուրի նուագակցութեան նոտաներն ունեմ միայն: Այն գոյութիւն ունի Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանում: Նրանց խորհուրդ եմ տալիս դիմել Հայաստան:

- Իսկ միջազգային բեմերո՞ւմ:

- Լոնտոնի Arcola թատրոնն ամէն ամառ օֆերային փառատօն է կազմակերպում: Յայտնի երգիչները մեծ ուրախութեամբ են մասնակցում, որովհետեւ փառատօնը միջազգային հռչակ ունի: Շուտով պետք է մեկնեմ Լոնտոն, որտեղ ընդամենը 2 շաբաթ ունենք «Կարինէն» բեմադրելու: Գլխաւոր դիրիժորի կարծիքով, որը անգլիացի է, գործը հոյակապ է: Ի դէպ, նոյնը ասել էին ֆրանսացիները, երբ «Կարինէն» անցեալ տարի ներկայացրել էինք Փարիզում, իմ ֆրանսերէն ադապտացիոն փոփոխութիւններից յետոյ: «Օֆերա օֆերայի մէջ» սկզբունքով էի կատարել այդ փոփոխութիւնը: Լոնտոնի Arcola թատրոնի տնօրէնը, ծագումով թուրք, ծանօթ ռեժիսոր է, «Կարինէի» գլխաւոր հերոսուհին՝ հիասքանչ ձայնով յոյն երգչուհի, թուիս, սիրուհիկ աչքերով, ճիշդ հայի նման: Իհարկէ, այնտեղ կան նաեւ անգլիացի եւ այլ ազգի երգիչներ: Այսինքն՝ ինտերնացիոնալ է ողջ անձնակազմը:

Ճիշդն ասած, ինձ հետաքրքրողն այս բոլորի մէջ այն է, որ մարդիկ Չոլխաճեանին գնահատեն ոչ թէ իբրեւ հայի, այլ իբրեւ մեծատաղանդ կոմպոզիտորի: Չոլխաճեանն արդէն անցել է այդ «ռուբիկոնը»...

- Իսկ «Արշակ 2-րդի» վերաբերեալ նորութիւններ կա՞ն:

- Իմ մօտեցումը եղել է նոյնը նաեւ այդ պարագայում: Դեռեւս յիշում եմ Սան Ֆրանսիսքոյի ներկայացումը: Շատ դժգոհ էի այնտեղ երաժշտական կրճատումներից եւ սխալ տեմպերից, սակայն այդ բոլորով հանդերձ Չոլխաճեանը յաղթանակ արձանագրեց: Նրան որքան էլ կրճատես, մեծութիւնը ակնյայտ է: Այստեղ որոշ թիւրիմացութիւններ փարատելու համար շեշտում, որ այդ ներկայացման բեմադրիչը ես չեմ... ափսոս: Այնուհանդերձ, միայն տեղի 2 թերթ քննադատեց, միւսները մնացեալ թերթերը գովեստի խօսքեր միայն գրեցին: Ի դէպ, Սան Ֆրանսիսքոյի օֆերայի բեմում ներկայացուած «Արշակ 2-րդից» դժգոհ էին միայն մեր հայերը, հիմնուելով ընդամենը քննադատական 2 յօդուածի վրայ: Մեր ազգակիցները բողոքեցին: Հարցն այն է, որ երբ Վերդիի կամ Մոցարտի մի գործը թերի կատարուի, քննադատները կատարողին կմեղադրեն. բայց երբ հեղինակը անծանօթ է՝ կարծում է որ սխալը Չոլխաճեանինն է, ինչպէս այս դեպքում: Նրանցից հետ չմնացին մեր հայաստանցի քննադատները, առանց տեսած լինելու բեմադրութիւնը, որում «Արշակ 2-րդը» ներկայացուած էր բնագրային իր վիճակով, այսինքն՝ Հայոց արքան բացասական կերպար էր, ինչպէս Թերզեանի լիբրետտոյում է, միւսները սովետական շրջանում այն հիմնովին փոփոխուած էր, ժամանակի պահանջներին յարմարեցնելով Արշակ 2-րդը դրական կերպար էր դարձել: Հայաստանցի քննադատներին առիթ էր տուել նաեւ այն, որ ներկայացումը Սան Ֆրանսիսքոյի բեմում ներկայացուեց միայն 6 անգամ: Նրանք չգիտէին, որ աշխարհի մեծ բեմերում իւրաքանչիւր օֆերա տուեալ սեզոնում ներկայացում է ընդամենը այդքան՝ 1,5 ամսուայ ընթացքում 6 կամ առաւելագոյնը 8 անգամ: Յիշեցնեմ, որ երկու հազար հոգանոց դահլիճ է Սան Ֆրանսիսքոյինը: Նշանակում է 12000 հոգի ներկայ գտնուեց, քանի որ ամէն զիշեր բոլոր տոմսերը վաճառուած էին: Չեմ կարծում այդտեղ 2000-ից ավել հայեր լինէին: Ովքե՞ր էին ուրեմն մնացեալ 10.000-ը, որոնք յոտնկայս ծափահարում էին ամէն երեկոյ:

Յետագայում հարկ եղաւ քննադատներին հետ այստեղ՝ Երեւանում պարզաբանել հարցը: Իմ տեսակետն այն էր, եւ այժմ էլ է, որ «Արշակ 2-րդով» մենք փաստօրէն դուռ բացեցինք հայկական օֆերայի առջեւ դեպի միջազգային բե-

մեր: Այնինչ բարձրացուած անհարկի եւ անտեղի «աղմուկը» պատճառ դարձաւ, որ Սան Ֆրանսիսքոյի օֆերան, եւ առ հասարակ ԱՄՆ-ի օֆերային թատրոնները, մերժեն յետագայ հայկական բեմադրութիւններ, ասելով, որ իրենք չեն ուզում հայերի նման հիստորիկ ժողովրդի հետ գործ ունենալ...

- Դուք Մ. Նահանգներում ներկայացրել էք նաեւ Արմէն Տիգրանեանի «Անուշը»: Ներկայացումներից մէկին՝ 2001 թ.ին Միջիկանի օֆերայի բեմում անձամբ ներկայ եմ գտնուել: Նոր առաջարկներ կա՞ն այդ ուղղութեամբ:

- Առաջին անգամ «Անուշը» ամերիկեան բեմ բարձրացաւ 1981-ին: 2001-ին «Անուշ» նորից բեմադրելու առաջարկը Միջիկանի օֆերայից ստացել եմ Սան Ֆրանսիսքոյի «Արշակ 2-րդից» յետոյ, որ դա արել էր քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակի առթիւ: Միջիկանցիներն ասել էին, թէ ինչո՞ւ է Սան Ֆրանսիսքոն իրենցից առաջ ընկել հայկական օֆերա ներկայացնելու հարցում, երբ մենք առաջիններն էինք:

«Անուշի» մասին շատ ամերիկեան թերթեր գովասանքներ են գրել, բայց կարծում եմ մեզ համար հետաքրքրական կլինի իմանալ Լոնտոնի միջազգային «Օֆերա Մակագիւնի» 2001-ի յօդուածի վերջաբանը: Այդ նոյն քննադատն էր, որ նաեւ լաւ էր արտայայտուել 1981-ի «Անուշի» մասին: Նա յոյս է յայտնում, որ եւս մի նոր յոբելեանական տարեթուի եւ կամ նորից 20 տարիներ սպասելու կարիքը չի լինի «Անուշը» վերստին վայելելու համար:

- Յայտնի է, որ Թուրքիայի առաջադէմ մտաւորականութիւնը այժմ հետաքրքրութիւն է հանդէս բերում հայկական արուեստի նկատմամբ, ընդունելով այն պատմական իրողութիւնը, որ Օսմանեան կայսրութիւնում թատրոնի եւ օֆերայի սկզբնաւորողները հայերն են եղել: Կա՞ն որեւէ հետաքրքրութիւն Չոլխաճեանի նկատմամբ, որը փաստօրէն հիմնադիրն է նաեւ թուրքական օֆերային թատրոնի:

- Որոշ հետաքրքրութիւն կայ առայժմ: Նոր եմ տեղեկացել, որ Ստամբուլի օֆերայի տնօրէն է վերջերս նշանակուել թուրքահայ երիտասարդ պարիտոն Գեւորգ Դալիթեանը: Յուսով եմ առիթ կը լինի միասին աշխատելու:

Մտածում եմ Լոնտոնի եւ յառաջիկայ բոլոր «Կարինէ»ները անպայման նուիրել Շազիկ Քեոյունեանին, որն ընդամենը 16-17 տարեկան աղջիկ է եղել Չոլխաճեանի օֆերաների հերոսուհիների դերը առաջին անգամ կատարելիս: Չոլխաճեանն է նրան ընտրել եւ դեր վստահել: Չմոռանանք, թէ այդ օրերին, շուրջ 150 տարի առաջ, ինչ համարձակութիւն ու զոհողութիւն էր պահանջում հայ աղջիկներից բեմ բարձրանալիս: Նա մեր առաջին պրոֆեսիոնալ պրիմա դունա-ն է:

Ափսոս, մեր երաժշտաթատերական պատմութիւնն այնքան անծանօթ է աշխարհին: Այնտեղ գանձեր կան: Բայց ամէն ինչ գրուած է միայն հայերէն: Ամէն բանից առաջ համոզուած եմ, որ անհրաժեշտ է համապատասխան գրականութիւն ստեղծել օտար՝ յատկապէս անգլերէն լեզուով: Բնագրերը պետք է թարգմանուեն գիտական ճշգրտութեամբ ու գեղեցիկ, ժամանակին լոյս տեսած կարծիքները՝ նոյնպէս, այդ եւ այլ գործերի ողջ պատմութիւնը պետք է ներկայացնել միջազգային երաժշտական եւ թատերական հանրութեանը: Գուցէ շատ չեն արժանի գործերը, բայց այն ինչ կայ՝ բարձրագոյն մակարդակով եւ հպարտօրէն կարելի է մատուցել աշխարհին: Արժանի են նրանք... Չոլխաճեանի նման:

*) Միջազգային ասպարեզում ծանօթ է Ժերալտ Բաբազեան անունով:

**Visit ABAKA online, in color,
current and past issues**
www.tekeyanmontreal.ca
**News and analysis in Armenian,
French and English**

Կոմիտասի Հիմնադրամ

ՀԵՂՈՎՈՐՈՂ ԵՐԿՐՈՒՄԻ ԶԱՎՈՐԵԱՆ (ԳԱՅԻՐԵ)

Կոմիտաս...
 Հայ բազմադարեան մշակույթի անպարագիծ մեծությունը:
 Կոմիտաս...
 Հայ երաժշտության ոգեղեն տաճարը եւ հայ հոգիի խորհրդանշանը:
 Կոմիտաս...
 Հայ ժողովուրդի նուիրականությունը եւ հայրենասիրությունը:
 Հարագատ երկրին սիրահար՝ Կոմիտաս եղաւ լուսաւոր եւ եզակի այն դեմքը, որ անհմանալի յայտնատեսութեամբ մը, անոր ընդերքներէն լոյս աշխարհի բերաւ հայ երգը՝ ինքնաստեղծ եւ ինքնատիպ, վեր հանեց անոր անպարտէշ անապականությունը, եւ իր ստեղծագործ հանճարին ուժով զայն բարձրացուց համաշխարհային երաժշտական արուեստի գագաթներուն:
 Որպէս հայ դասական երաժշտության նոր դպրոցի հիմնադիր՝ մեծ է Կոմիտասի կատարած դերը եւ անփոխարինելի:
 Հայ երգի անզուգական պատգամաբերը՝ իր խղճամիտ ծայնագրումներով, երաժշտական-տեսական բանիմաց ուսումնասիրություններով, հմտալից դասախօսություններով, բարձրարուեստ ստեղծագործական մշակումներով եւ համերգային-կատարողական նուաճումներով, ընդմիջտ լռեցուց այն ընդդիմախօսները, որոնք կը մերժէին հայ ինքնուրոյն երաժշտության մը գոյությունը եւ միաժամանակ հայուն տուաւ իր սեփական ստեղծագործական կարողություններուն գիտակցությունը:
 Կոմիտաս իր ողջ եւրեւրեմբ եւ անբասիր արուեստով մարմնաւորեց հայ ժողովուրդի խոհերուն, յոյզերուն, սրտի թրթռումներուն եւ հայրենասիրական ապրումներուն ամբողջ ստեղծաշարը:
 Որպէս հասարակական եռանդուն գործիչ՝ ան նպաստեց նաեւ հայրենի հողէն հեռու ապրող վտարանդի հայուն ազգային գիտակցութեան բացա-յայտումին եւ անոր հայրենասիրական զգացումներուն հրահրումին:
 Շնորհիւ Կոմիտասի՝ հայը կը ճանչնար ինքզինքը, եւ օտարը հայութիւնը:
 Եւ պատահական չէ, որ այդ երգերը՝ այսօր, սեփականությունը դարձած են ոչ միայն իր հարագատ ժողովուրդին, այլեւ առաջաւոր մարդկութեան:
 Հայ մշակույթի անխոնջ նուիրեալը գործեց եւ ստեղծագործեց պատմա-կան այն մտայն եւ տարապայման ժամանակաշրջանին, երբ հայ ժողովուրդը կը ձգտեր խաղաղ եւ անկաշկանդ կեանքի մը՝ ազատ երկնակամարի մը տակ:
 Եւ այսօր, երբ հայ ժողովուրդին բաղձանքները իրականացած են, կոմի-տասեան երգը կը հնչէ աւելի հզօր, աւելի շքեղ, որպէս հայ ստեղծագործ հանճարին յաղթերը պանծալի:
 Տարիներու հուլովոյթին մէջ, Կոմիտասի հիմնադրամը կը շարունակէ աւելի եւ աւելի խորանալ ու արմատանալ ամէն հայ սրտէ ներս, քանդելով այլամերժ համոզումներու եւ գաղափարներու բոլոր պատուարները եւ ներդաշնակ լոյսով մը ողողելով բոլոր հոգիները:
 Կոմիտաս ապրեցաւ իր ժողովուրդին ցաւերով, աշխատեցաւ անոր հա-մար, եւ իր կեանքն ու հանճարեղ միտքը գոհաբերեց անոր վեհ գաղա-փարներուն արծարծումին եւ յաղթանակին համար:
 Հայ ժողովուրդին նման՝ հայ երգին հետ յաւետ պիտի ապրի իր անունը:
 Փա՛ռք իր յիշատակին եւ Փա՛ռք իր անվախճան գործին:



ԿՈՄԻՏԱՍԻ ՀԻՄՆԱԳՐԱՄ

ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Նուիրուած՝
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ
 (1869 - 1935)

մահուան ութսուն ամեակին առթիւ

Նախաձեռնութեամբ՝
ԹԷՔԷԱՆ Մշակութային Միութեան

Ուրբաթ, 4 Սեպտեմբեր 2015, երեկոյեան ժամը 8:30-ին
 ԹԷՔԷԱՆԻ կեդրոնին մէջ

Հովանաւորութեամբ՝
ԳԵՐՇ. ՏԷՐ ԱԲԳԱՐ Ս. ԵՊՍ. ՅՈՎԿԻՍԵԱՆԻ
 ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԳԱՆԱՏԱՅԻ

Նախագահութեամբ՝
ԵՒԳԵՆԷ ԵՓՐԷՍԵԱՆ տը ԿՐԷԷՖԻ

Գեղարուեստական յայտագրի պատասխանատու՝
Սամուէլ Քեօշկերեան

Օրուայ բանախօսներ
Տօթթ. Տէր Զաւէն Արզումանեան
Սամուէլ Զարշաֆեան

Yevkiné

Ոչ եւս է Տօթթ. Հերմոն Արաքս

Յանկարծակի ցնցում մը ունեցայ երբ Մար-մարա օրաթերթի չորրորդ էջին մէջ դեմառդեմ եկայ Տօթթ. Հերմոն Արաքսի մահագրին հետ: Ինչպէ՛ս չցնցուէի յիշելով թէ ան, թէեւ տարիքով ինձմէ երեք տարու աւելի փոքր էր, իր հետ ունեցած եմ երկար միասնություն մը ազգային հարցերով գործակցութեան մէջ, միշտ գաղա-փարներու հաշտութեամբ եւ իրերհասկացողու-թեամբ:

Իմ երիտասարդական տարիներուս կար յայտ-նի վաճառական եւ ազգային գործիչ մը, անունը Կարպիս Զամպաթ, որ Պեզճեան վարժարանի լիւսի բաժանը կարդալէ ետք հետեւած էր շուկա-յի կեանք: Թերեւս այդ ըլլար պատճառը, որ մեծ համարում եւ յարգանք ունէր բարձրագոյն ուսում առնողներու: Ինք Պոլսոյ Ազգային Հի-լանդանոցի հոգաբարձութեան ենթակայ ինա-մակալ ըլլալէ ետք մեծ սիրով կապուեցաւ նորա-կազմ Ս. Խաչ Դպրեվանքի, որուն առաջին վար-չութեան մէջ ստանձնեց գանձապահի պաշտօնը, ատենապետ ունենալով Պրն. Կարապետ Ղա-զարեանը: Չորս տարի վերջ սակայն, հակառակ հոսանք մը արծարծեց, յայտնի դարձնելով, որ չէր բաւարարուած հին կազմի գործունէութենէն: Համոզեց զիս, նաեւ Տօթթ. Հերմոն Արաքսը եւ առանց իրարմէ լուր ունենալը մտանք թեկնածու-ներու մտցորդ ցանկին մէջ: Այս ցանկն էր, որ շահեցան ընտրութիւնը: Պրն. Կ. Զամպաթ յաջո-ղած էր նոր կազմին մէջ մտցնել երկու համալ-սարանական շրջանաւարտներ:

Իր տեսակետին իրաւացի ըլլալը յայտնի եղաւ, քանի որ Ազգ. Հիլանդանոցի հոգաբարձութենէն ետք ամենէն աւելի հեղինակություն ունեցաւ մերը: Երբ. Սրբ. Պատրիարք Հայրը խորհրդակ-

ցական ժողովի հրաւիրէր կազմակերպու-թիւններու եւ Թաղական Խորհուրդներու ատե-նապետները, աջին կը նստէր Ազգ. Հիլանդանոցի հոգաբարձութեան ատենապետը, իսկ ծախ կողմը կ'ըլլայի ես, որպէս Ս. Խաչ Դպրեվանքի ինամակալութեան ատենապետ:

Ես Պրն. Կ. Զամպաթը առաջին անգամ ճանչցայ, երբ Ս. Խաչ Դպրեվանքը նոր կազ-մըւած էր եւ կոչուած էր իրականացնել Անա-տոլիի հայ երիտասարդութիւնը Իսթանպուլ բերելով դաստիարակելու նման բարձր բայց դժուարին պարտականութիւն, ու այդ ուղղու-թեամբ դրամահաւաքի մը ձեռնարկուած էր Իսթանպուլի մէջ:

Նման այցելութեան մը առթիւ մեր ալ տան դուռը զարնուեցաւ եւ առանց սպասելու մեր հրաւերին, ներս մտաւ երեք հոգիսոց դրամա-հաւաքի խումբ մը, գլխաւորութեամբ բարձրա-հասակ եւ ինքնավստահ տիկնոջ մը, որուն աստրական վերարկուն ու փետրաւոր գլխարկը իրաւամբ պատկառանք կ'ազդէին:

Ձեռքին սուղնոց պայուսակը այնպիսի վարպետութեամբ բռնած էր, որ կարելի չէր ուշադրութիւն չդարձնել իր մատանի լուսա-ճաճանչ մեծ քարին: Բնաւ չուշացան յայտնելու իրենց այցելութեան պատճառը եւ ինձմէ սպաս-ւած նուիրատուութեան քանակը: Գործիս մէջ պատահած անբախտութեան մը պատճառաւ շատ դժուար շրջան մը կ'ապրէի. ուստի բնաւ չչուարեցայ պատասխան մը գտնելու համար: Այցելուներէն միակ ծանօթն էր Պրն. Կ. Զամպաթ, զոր տարի երեք քայլ հեռու անկին մը. բացառ-րելով թէ սնանկութեան սեմին եմ եւ կարելիու-թիւն չունիմ որեւէ վճարում ընելու, հակառակ, որ

Ս. Խաչ Դպրեվանքը սրտիս ամենամօտիկ հաստատությունն է, որպէս հոգածու գաւառի տղոց ինամքի եւ դաստիարակութեան:

Իմ այս խօսքս էր, որ ինձի պիտի յիշեցնէր Պրն. Կ. Զամպաթ, Ս. Խաչ Դպրեվանքի նոր շրջանի վարչութեան առթիւ, չորս տարիներ վերջ: Ինք էր, որ չորս տարիներ ետք այս հաս-տատութեան նոր վարչութեան ընտրութեան համար նախադրեցաւ եղած էր նոր անուա-նացանկով մը, ուր կար Տօթթ. Հերմոն Արաքսը եւ կ'ուզէր նաեւ ներառնել զիս: Ան կը հաւատար, որ երկու համալսարանաւարտ անուններու միա-ժամանակ գտնուիլը մեծ ծանրութիւն պիտի տար իր գլխաւորած կազմին: Այս պատճառաւ կամ ոչ, այս ցանկն էր, որ շահեցաւ: Անշուշտ իր թելադ-րութիւններուն արդիւնքով էր, որ նորակազմ վարչութեան անդամները իրենց առաջին նիս-տին իսկ զիս ընտրեցին ատենապետ, իսկ Տօթթ. Հերմոն Արաքսը ատենադպիր, քանի որ անոնք նախապէս ծանօթ չէին մեզի: Այս նոր պարտա-կանութիւնը արգելք չէր որ ես պահէի նաեւ Մխիթարեան Սանուց Միութեան ատենապետու-թիւնը: Պրն. Կ. Զամպաթի փափաքը իրականա-ցած էր. Ս. Խաչ Դպրեվանքի ինամակալութեան կազմին մէջ կային երկու համալսարանաւարտ-ներ: Մեր կազմը երկար տարիներ, վերընտ-րութեամբ տարաւ այս ծանր՝ այլ պատուաբեր ծառայութիւնը:

Մինչդեռ իմ առաջին ընտրութենէն առաջ Տիկ-նանց ինամակալութիւնը թերթերու միջոցաւ ծանուցած էին թէ ամբողջական կազմով պիտի հրատարէին եթէ Պրն. Ղազարեանի գլխաւորած կազմը չվերընտրուի: Սակայն անոնք սիրեցին նաեւ մեզ. արդէն անոնց համար շատ դժուար էր հեռանալ աշակերտներէն, որոնց ծնողքը մնա-ցած ըլլալով Անատոլիի այլ քաղաքները, իրենց մօտեցած, մտերմացած եւ բարած էին իբրեւ

Ոչ եւս է Տօթթ. Զերմոն Արաքս...

Շար. էջ 15-էն

երկրորդ մօր մը.

1970ին հեռացայ իմ այս սիրելի պաշտօններէն, քանի որ պիտի գաղթի Մոնթրէալ:

Տօթթ. Զերմոն Արաքս Կեդրոնական Ազգային վարժարանի շրջանաւարտ, մաթրամաթուր նկարագրով եւ աշխատասեր, բոլոր զինքը ճանչցողներէն սիրուած եւ յարգուած, լուրջ եւ գիտակից անձնաւորութիւն էր: Չեմ յիշեր ոեւէ վշտացում եւ տարակարծութիւն, իմ եւ ինձամակալ բոլոր անդամներու կողմէ: Միշտ յարգալիր էր ինձամակալուհի տիկիններու հանդէպ, թէեւ ինձ չափ գործակից եւ մօտիկ չէր անոնց:

ԱՅՍՕՐ, ԵՐԲ ՏԱՔՈՒԿ ԶԳՑՈՒՄՆԵՐՈՎ, ԲԱՅՑ ՍՐՏԻ ՍԵՂՈՒՄՈՎ ԿԸ ՆԱՅԻՄ ԻՐ ՄԱՅԱԶԳԻՆ, ԱԿԱՄԱՅ ԿԸ ՓՆՏՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՅԱԶԳ ՄԸ ԵՒՄ, ՈՐ ԸՍՏ ԸՆԿԱԼԵԱԼ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ, ՍՏՈՐԱԳՐՈՒԿԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՐ ԱՅԺՄՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵ: ԱՅՍ ՊԱՐԱԳԱՆ ԽՈՐՀԻԼ ԿՈՒ ՏԱՅ ԹԵ ԱՐԴԵՆ ԻՍԿ ՍՈՈ-

ՑԸԲԱԾ Է Ս. ԽԱԶ ԴՊՐԵՎԱՆՔԻ ԶԱՄԱՐ ԱՄԵՆ ԿԵՐՊՈՎ ՕԳՏԱԿԱՐ ԵՂՈՂ ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱՏՈՂ ԵՒ ԱՇԽԱՏՈՂՈՒԻՆԵՐՈՒՄ ԱՆՁՆՈՒՐԱՑ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ: ՄՈՌՆԱԼ ԵՐԿԱՐ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԶԱԲԱՏԱԲՈՐ ԱՏԵՆԱԴՊԻՐԸ ԵՒ ԶՅԻՇԵԼ՝ ԱՆՆԵՐԵԼԻ ԶԱՆՑԱՌՈՒԹԻՒՆ Է:

Ազգային ծառայութեան ընտրուած ամէն նոր անդամ պետք է բանայ հաստատութեան հին ատենագրութիւնները եւ կարդայ: Ոչ մէկ կասկած, որ աւելի եռանդով համակուած պիտի ձեռնարկէ իր նոր պաշտօնին: Աւելի լաւը ընելու թելադրութիւնը պիտի խթանէ զինքը:

Իմ անկեղծ վշտակցութիւնն ու սրտակցութիւնը կը յայտնեմ Տիկ. Շուշան Ռիթա Արաքսի, Տիար Բաֆֆի Արաքսի, Տիկ. Սիլվա Ժագօպսն Արաքսի եւ բոլոր մօտաւորներուն: Իսկ սիրելի հանգուցեալին կը մաղթեմ հոգիի խաղաղութիւն:

ԱՐԱՅ ԿԱՐՍԻՐԵԱՆ
Մոնթրէալ,
18 Յուլիս 2015

Թիֆլիսի Ս. Մինաս եկեղեցին փլուզման եզրին է



Առանց տանիքի արդէն մէկ տարի գոյատեւող, Թիֆլիսի կեդրոնին գտնուող Սուրբ Մինաս եկեղեցին կանգնած է փլուզման վտանգի առջեւ: Մտավախութիւնը Զայ առաքելական եկեղեցւոյ Վիրահայոց թեմինն է: Թեմէն կը յայտնեն, որ առանց տանիքի գոյատեւող եկեղեցւոյ պատերը արդէն կը թուլանան, անոր հետեւանքով չի բացառիր, որ եկեղեցին փլուզուի: Այս մասին կը յայտնէ Akhikha.net-ը:

Անցել է արդէն մէկ տարի, սակայն եկեղեցու նորոգման հարցով ոչ մի փոփոխութիւն չկայ: Վիրահայոց թեմը բազմաթիւ նամակներ յղած է պատկան մարմիններուն եւ ներկայացուցած եկեղեցւոյ վիճակը, սակայն ոչ մի փոփոխութիւն», ասաց Սուսանայ Խաչատրեանը՝ յաւելելով, որ փլուզած տանիքը վերանորոգելու փոխարէն քաղաքապետարանն ամբողջութեամբ ազատեց եկեղեցին տանիքից, եւ այսօր արդէն առանց տանիքի եկեղեցու պատերը թուլանում են: Անձրեւները, քամիներն ու ձիւնն էլ աւելի են վատացնում իրավիճակը:

Երեւանցոց Սուրբ Մինաս հայկական եկեղեցին կը գտնուի Զաւլաբար թաղամասի Նոր Էջմիածին գործող եկեղեցիէն ոչ հեռու: Պահպանուած տուեալներուն համաձայն՝ Սուրբ Մինասը կառուցուած է 1790 թուականին: Սկզբնական շրջանին եկեղեցին մեծ կառոյց չէ եղած, եւ 1870 թուականին անհրաժեշտութիւն յառաջացած է առաւել մեծցնել եկեղեցւոյ շինութիւնը: 1883-ի Յունուար 2-ին հին եկեղեցւոյ տեղը արդէն խոյացած է Երեւանցոց Սուրբ Մինասը: Խորհրդային տարիներուն եկեղեցին զրկուած է գմբէթէն եւ օգտագործուած իբրեւ արհեստանոց: ԽՍՀՄ փլուզումէն ետք Երեւանցոց Սուրբ Մինասը դասուած է «վիճելի» եկեղեցիներու թուին:



Tekeyan Cultural Association

Gentlemen's Evening

Roast Beef "à volonté"
Open bar with quality Whiskey and Cognac
Complimentary Cuban Cigars



A great opportunity to spend an evening with friends and enjoy great food and entertainment in an outdoor environment



New this year, by popular demand
Texas Holdem tournament
(for interested participants only)

Sunday, August 30, 2015
from 6:30 PM

Centre Tekeyan
825 Manoogian street, St-Laurent

\$ 125

By reservation only
Tekeyan (514) 747-6680 Arto (514) 739-3562

Drink moderately. Make sure you have a designated driver to take you home safely.

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Տեր եւ Տիկ. Պետրոս եւ Ռեհինա Պետրոսեան ողբացեալ Սոնիա Թաշճեան-Գալանեանին մահուան տխուր առիթով «Ապագայ» շաբաթաթերթին կը նուիրեն 50 տողար: